

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

[UNIVERSITÉ]

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹ

Բնութիւնը միշտ փակող
Գիտութիւնը վերաշինող .
Այս վերջինին դիմելու է,
Առաջինին տրեղու համար :

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

1900

— ՓԵՏՐՈՒՍԻ —

ԹԻՒ 2

ԽՐԲԱԳԻՐՆԵՐ

Մ. ՊԱՂՏԱՍՏՐԵԱՆ | ՅՈՎՀ. ՇԱԻԱՐՇ

ՓԱՐԻՋ

Directeurs : MISSAK BAGHDASSARIAN & HOVHANNÈS CHAVARCH

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գիտութիւնները մեր մեջ (Մ. Պաղտասարեան)	65
Բարիի Գաղափարը (Յովհաննէս Շաւարշ)	70
Գրականութիւն եւ Գեղարուեստ (Մոզ—Պետ)	75
Մտնուական Չրոյցներ —Սորպոնը— (Շարլ Պօլիէօ)	79
Գիտութիւն եւ Գիտ (Մխաբ Պաղտասարեան)	82
Հին Փարիզը առաջիկայ արուեստանիւնի մեջ (Վ. Պէքեարեան)	84
Մեկնութիւնը — բանաստեղծք. — (Հրուշան)	86
Հեկաքսնութիւն (Գէորգ Մկրտիչեան)	87
Գրեղու Արուեստը (Մոզ—Պետ)	90
Գիտական Նորութիւններ (Նշան) (Օղային Նաւը	95
(Հեռագրական Նոր Գիւտ	97
Մօր մը Հաւասքը (Մոզ—Պետ)	99
Թոքսիսը —ստոյգապահական—	105
Կարեւոր Գիտելիքներ	106
« Հաւաքարան » ի Մատենադարանը	107
Խ. Աբովեան —գրախօսական— (Յի-Շէ-Մա)	108
Նոյնահնչիւն Բառեր (Փրանսերէն Լեզու)	112

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հաւաքարանի շրջանը 1900 էն սկսելու համար առաջին թիւը որուն վրայ Նոյնեմբեր նշանակուած էր, իբր Յունկարի թիւը պիտի նկատուի: Տարեկան բաժանորդները 12 թիւ պիտի ստանան:

Հաւաքարանի բաժանորդագիրները կրնան զրկուիլ՝ Մանտալ Փոստով, թղթագրամով եւ փարիզեան որ եւ է պանքի վրայ չէքով:

Փրաս. վարժարաններու վրայ տեղիկութիւն ստանալ փափայքողները կրնան գիմել մեզ Չ Ֆրանք զրկելով, Մեր բաժանորդներէն աջ՝ օրինակ յանձնարարութիւններ ձրիաբար կը կատարուին:

Փարիզի մէջ Հաւաքարանի առաջին թիւը (որ սպառած է) ստացողներէն կը խնդրուի որ կամ բաժանորդագիրը կամ թերթը յանձնեն մեր գործակատարին որ իրենց պիտի ներկայանայ:

Հաւաքարանի վրայ կարծիք յայտնող թերթերէն անոնք որ իրենց այդ համարը մեզ չեն զրկած գոհ կ'ըլլայինք եթէ փութացնէին:

Կը խնդրենք անգամ մ'ալ որ հայ լրագրագետները հաճին իրենց թերթը փոխանակել Հաւաքարանի հետ:

Մեզի նամակով բաժանորդագրուիլ փափայք յայտնողներուն կ'իմացնենք որ չղանդաղին իրենց բաժանորդագիրը մինչեւ Յրոր թիւը, ամենէ ուշը, զրկել. հակառակ պարագային իրենց թերթը առաքումը պիտի դադրեցնենք:

ՄԵՐ ԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեծ. Առաքել Ծատուրեանի որ բարեհաճած է «Համալսարան» ի բաժանորդագրութեան փոխարէն զրկել Յ անգլիական ոսկի:

«Բազմավէպ», «Հանդէս Ամսօրեայ» եւ «Բիւրակն» հանդէսներուն. «Արմէնի», «Արմէնիա», «Արշալոյս», «Իրաւունք», «Հայ յելի» եւ «Շարժում» լրագիրներուն որ ուրախութեամբ ողջունեցին Հաւաքարանի երեւումն ու գնահատեցին անոր ուղղութիւնը:

55
70
75
79
82
84
86
87
90
95
97
99
05
06
07
08
12



ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ

Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Գիտութիւնները կը ծաղկին ու կը ծաղկեցնեն քաղաքակիրթ աշխարհը, եւրոպան : Իրենց հսկայաքայլ յառաջադիմութեան մէջ, եթէ մեր հիացումը կը հրաւիրեն իրենց վրայ՝ միւս կողմէ խիստ տխուր տպաւորութեան մը տեղի կուտան, երբ անոնց յետամնաց վիճակը կը նկատենք՝ մեր մէջ : Չէինք կրնար պահանջել որ ունենայինք Էտիսոնի, Բասդէօտի, Պէրթըլօյի եւ Օսդերկրէնի պէս գիտնականներ, քանի որ այդպիսի հանճարներ դարերու հորիզոնին վրայ միայն փայլող աստղեր են : քանի որ անոնք փայլելու համար ունեցած են ամեն տեսակ դիւրութիւն, միջոց եւ նըպաստաւոր պայման : Կրնայինք յուսալ, սակայն, որ ունենայինք մշակներ, որ առաջնորդէին միտքերը՝ գիտութիւններու անհունութեան մէջ, ու հարթէին հետաքրքիրներու առջեւ դժուարութիւնները՝ զոնէ, զնելով այս վերջինները՝ զանոնք ու անոնց կարեւորութիւնն ըմբռնելու եւ հասկնալու հասողութեան մէջ :

Թերեւս խիստ յանդուգն վճիռ մ'արձակած ըլլամ, երբ ըսեմ թէ մինք այս տեսակ առաջնորդողներ չունեցանք : Բարի տրամադրութիւն մը երեւցաւ ոմանց վրայ, գիտութիւնները դասական դարձնելու եւ նորահասները, այդ շաւիղով, կրթելու : Բայց ատոնք, խիստ քիչ բացառութեամբ, նորութեան կարապետի մը աննպաստ պայմաննե-

րուն հանդիպեցան. խոչընդոտներ, նիւթնական թէ բարոյական, արգիւնեցին իրենց եզրնաչով ընթանալու ծրարիւրին յաշոյղութիւնը, ու խիստ քիչեր միայն հաստատակամութիւնն ունեցան քիչը ձեռք բերելու ձգտիլ ու անով՝ առ ի չգոյէ շատին, գոհ ըլլալ: Անոնք ալ որ, ասոնց մէջ, բացատութիւններ կազմեցին, թէեւ նպաստաւոր պայմաններով օժտուած, կամ չունեցան առաջնորդի յատուկ ծանօթութիւնները ու շուարած մնացին իրենց նոր քայլին մէջ, եւ կամ թէեւ եզան կարող միտքեր, ձեռնասանձաւորութիւններ, սակայն խառնեցին իրենց մեթոտին մէջ ստեպ գիտութեան ոգիին եւ սկզբունքներուն վնասող վարդապետութեան մը մտայլ ստուերը, ու իրենց դերին մէջ մնացին միշտ միջաչ: Չի տուին գիտութիւններու իրենց որոշ գոյնը՝ որով անոնք մարդկութեան ներկայացան ու ծանօթացան. կիրարկեցին, հոն ալ, ընտելացումի կազմալուծող գրութիւնը, ու զանոնք օտարացնել ուզեցին, յաճախ, յամառ ետականութեամբ մը: Ու այսպէս թէ այնպէս գիտութիւնները, այսօր մնացին մեր մէջ ողբալի վիճակի մը մատնուած:

Հրապարակը կ'ողողեն, համեմատաբար, գրական բազմաթիւ երկեր ու ուսումնասիրութիւններ, եւ տեսակ մը ճակատագրային մեքենականութեամբ, մեր նորահասները աւելի երազողներ ըլլալու եւ վերացական միտքեր զուսալու կը տրամադրին. մինչ գիտական գործեր բազրատաբար հաղուադէպ են, թողունք իրենց որքան յաշոյղին ու արժէքը. ու այդ ոգիով պարբերական հրատարակութիւններ խիստ կարճատեւ կեանք մը կ'ունենան: Ո՛չ միայն պէտք է զգացնել, իրերու այս վիճակին մէջ, գիտութիւններու անհրաժեշտ պէտքը, ուրկէ կախուած է, այսուհետեւ, անխուսափելի կերպով, ժողովուրդներու բազմն ու դոյութիւնը, հայ տարրին, այլեւ դեկ այդ բանին համար որոշ ուղի մը եւ ոգի ի բռնին ճգնիլ որ, մեր մէջ, վաղեմի հինցած եւ անպէտ դարձած կրթական գրութիւնները վերակազմուին ու համապատասխանին արդի ընկերական պահանջներու. այս պէտք է լինի ճիշտ ու ճիշտ մեր ժողո-

վուրդի կրթութեան զեկն իրենց ձեռքին մէջ ունեցողներու գլխաւոր մտադրադումն եւ հրապարագիրներու ծեծելիք ամենակարեւոր հարցերուն կարեւորագոյնը :

Մեր գիտական հրատարակութիւնները, իրենց ցանցառութեան մէջ վիժած են, առհասարակ : Ու ասոր պատճառը փնտռելու է աւելի՝ իրենց հեղինակներու ընտրած սխալ մեթոտին մէջ : Անոնցմէ իւրաքանչիւրն ունեցած է իր սեպհական քանակաճոյքը, ու իր, եւ միայն իր, նորասիրութիւնը յառաջ մղելու հետամտած է, գիտնական նոր եւ անծանօթ հողին վրայ : Անորոշութիւն մ'է որ կը աւերէ . ամեն անոնք որ հոն ոտնակոխած են, քշուած տարուած են միեւնոյն պղտոր հոսանքէն, եւ թողլով իրենց բացասական ու դրա՛կան հեռքերը տեսալ մը լաքիւրինթոս դարձուցած են մեր գիտական բառարանը :

Ոչ Մխիթարեան հայրերու եւ ոչ մեր աշխարհական գիտնականներու օգտակար լինելու տենչը պիտի իրականանայ, ու իրենց գիտական երկասիրութիւնները պիտի արգիւնաւորեն եւ քաջալերուին, եթէ անոնք չունենան, ամեն բանէ առաջ, այն որոշ եւ ընդհանուր համոզումը թէ կարելի չէ գիտութիւնները ներկայացնել մեր ժողովուրդին՝ իւրաքանչիւր անձի ուզածին պէս եւ զանոնք ուսուցանել առանց գծուած ու չափուած մեթոտի մը, որուն հետեւին ամենքն ալ : Եթէ գիտութիւններու ուսուցումը երկրորդական համարուած է, մեր ազգի կրթութեան գործին մէջ, ասոր գլխաւոր պատճառը զայն ուսուցանելու անկարելիութիւնն է, ծնունդ մեր ցոյց տուած անորոշութեան :

Գիտութիւնները՝ մեր վարժարաններու մէջ, պէտք է ուսուցուին իրենց լեզուով, կը պոռար անցեալները պոլսական թերթի մը խմբագիրը . ու իր բողոքին մէջ եթէ ան ճշգրիտ սահման մը չէր գծեր, ու ծայրայեղական մը կ'երեւէր, միւս կողմէ ցոյց կուտա վերջինը դարու մարդ մը լինելը : Մերը չեն գիտութիւնները ու մենք միշտ պանոնք ազգայնացնելու ձգտումն ունեցած ենք : Կ'առնենք

գիտական յաճախ բազադրեալ օտար բառ մը ու զայն կ'ուզենք թարգմանել եւ թարգմանել անպատճառ. որովհետեւ կ'ուզենք զայն հայացնել, ինչպէս չորացրակալի կ'ըստեն — *acide chlorhydrique* —, ծորացրածնագայլախաղաղիկն թրու — *acide fluohydrosilicique* — .

Այս օտար բառերու հայերէնի չրջումը ոչ միայն օգտակարութիւնէ զուրկ է, այլ եւ, մեր լեզուի մէջ, իրենց արտասովոր եւ խառնակ կազմութեամբը՝ ամենէ յանդուգն միտքերու ալ անհպելի: Մեր տուած օրինակներէն կը տեսնուի որ այդ բազադրեալ բառերէն ումանք՝ իրենց հայացումին մէջ կը պահեն իրենց ինչ ինչ անդամներու օտար կազմութիւնը՝ տառադարձութեամբ կամ հնչումի թարգմանութեամբ, ինչպէս չոր — *chlore* — . ու ասիկա, անշուշտ այն միակ պատճառով, որ վերծանողը չէ կարողացած իր ճաշակին յարմար հայ նշանակութիւն մը տալ այդ բառին: Հակառակ պարագային պիտի զարմանայինք, անշուշտ, թէ ինչո՞ւ *chlore* որ կը նշանակէ դեղնականաչորակ (*jaune verdâtre*) հայերէն չեն թարգմանած. ու, օրինակի համար *acide chlorhydrique* ինչ ըսուած դեղնականաչորակալախաղաղիկն թրու. երկու մզոնէ աւելի երկար բառ մը:

Նոյն իսկ վերջերս Բազմալէպ իր « Հանք եւ իրենց Ստուգարանութիւնն » յօդուածներով կը նկրտի մղուիլ նոյն սխալէն, ու կը ջանայ այս կամ այն գիտական բառին հայերէն ճշմարիտ թարգմանութիւններն ստուգարանել: Իրաւունք կուտայ Հ. Գ. Մէնէլիքեանի *Sulfure de zinc* իբր թարգմանութիւն գործածած *Չնկաղօսիկ* բառին: Ու աւելի գեղեցիկ կը գտնէ Հ. Մ. Գաջուհի միեւնոյն բառին տուած *Փայլուի անուը*, որ իմաստի թարգմանութիւնն է *blende* ժողովուրդական բառին: Դարձեալ Հ. Մէնէլիքեան կոչած է ծծմբագեղի՝ միեւնոյն բառը:

Sulfate de magnésie բառին հայերէն ըսած են *եպսոմիտ* (*epsomite*), դառնաղ, մաքրողական աղ ու ամենէ վերջն ալ ծծրաբոս մագնիսիոյ: Հայացուցած են նաեւ, իրենց կամեցածին պէս՝ *Իսլանտախաղ* (*Spath d'Islande*), *Փայլու կամ Թիթեղոն* (*mica*), *Ժարգոն կամ Յիրկոն* (*jarcon*), եւ այլն բա-

ուերը : Ու պարտաւորցնել ժողովուրդը կամ դաստիարակները նախամեծարութիւն տալու այս կամ այն բառին, ատիկա կը նշանակէ արդէն անորոշութեան մէջ մղել զանոնք :

Ու այս ամենէն կը հետեցնենք .

Հայ լեզուով պատրաստուած գիտական դասական գիրքերը, պէտք չէ այդ բառերէն եւ ոչ մին իբր յարմար, գործածեն . ըսենք պարզապէս *oxygène* (օքսիժէն) ու եթէ ժողովուրդականացած անուն մ'ալ ունի՝ այն ալ ցոյց տանք : Ըսենք *Sulfate de magnésie* եւ իր մօտ նշանակենք դառնաղձի էթէ ենթադրենք որ ժողովուրդն ատոր այդ անունը կուտայ : Ինչո՞ւ մենք չընդունինք ինչ որ Ֆրանսացիք, գերմանացիք, եւայլն, կը գործադրեն արդէն : Կ'ըսեն օրինակի համար, *sulfure de zinc* ու առջեւը փակագիծի մէջ ժողովուրդին գործածած բառը կը նշանակեն, այսինքն *blende* . նրմանապէս *chlorure de sodium* (*sel marin*), եւայլն :

Երբ աշակերտները գիտութիւնները նոր կ'ուսանին ու տակաւին իրենց վարժարանին ուսուցած օտար լեզուով գիրքեր հասկնալու կարողութեան մէջ չեն գտնուիր, կըրնան շատ լաւ այդ բառերը սովորել բացատրութիւններով, մինչեւ որ աւելի մանրամասն ուսումնասիրեն գիտութիւնները նոյն իսկ իրենց սովորած լեզուով :

Ժողովուրդին կը գրենք, բացատրենք մեզի անոր հասկանալի ոճովը, հետաքրքրենք զինքը՝ իր սգիտութեան դէմ ապարդիւն կերպով չկոտելու համար (*) :

(*) Այս նիւթին վերաբերող ամեն հեղինակաւոր կարծիք սիրով կը հրատարակենք Համարարանի մէջ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱԻԱՐՇ

ԲԱՐԻԻ ԳԱՂԱՓԱՐԸ

(L'idée du Bien)

Բարոյականի ընթանունը՝ հին դարերու մեջ. — Բարիի գաղափարը Սոկրատի մեջ. — Պլատոն եւ իր գաղափարականութիւնը (idéalisme). — Արիստոս եւ գերախոյրքիւնը (suprématie) բարիին՝ տեղեւորի մեջ ու բանականութեան՝ մարդուն մեջ. — Երջանկութիւն. — Առաքիլները :

Հնադարեան ժամանակներու մէջ, երբ տակաւ սկսան մարդուն մէջ զարգանալ իմացական կարողութիւնները՝ գատելու եւ տրամաբանելու, բարիի եւ չարի գաղափարը ծնունդ առաւ հոն, իր գանազան ձեւերուն տակ ու տարբեր — երբեմն նոյն իսկ հակասական — ըմբռնումներով, եւ անցաւ գիտութիւններու կարգին մէջ :

Բարոյագիտութեան սկիզբէն իսկ, Սոկրատի (470-399) մէջ կը գտնենք այն համոզումը՝ թէ բարիի գաղափարը պէտք է լինի գերագոյն սկզբունք. որովհետեւ, ան կը ծառայէ, իրերը մտածողութեամբ՝ իրենց ճշմարիտ շարքին մէջ զետեղելու, եւ այսպէսով կարգադրելու մեր գործերը : Արտաքին աշխարհը ուսումնասիրելով չէ՛ որ պէտք է փնտռուի մեր օրէնքը, այլ խղճնեանքով. այս վերջինն է բնական օրէնքը, որ երբեք չի կրնար շեղիլ մարդերու համաձայնութեամբ, այլ միշտ կ'առաջնորդուի բանականութեամբ՝ որ ճշմարիտ բնութիւնն է : Ով որ իր բանականութեան հակառակ կը գործէ՝ կը նսեմանայ եւ կը դառնայ ստոր գերի. մինչդեռ, ընդհանրապէս, այն որ կը լսէ միայն իր ներքին դրողումին, այսինքն՝ խելացի, արդար, քաջասիրտ մարդը, ճշմարիտ մարդն է այն, որ կը ձգտի միանգամայն իր կատարելագործութեան ու երջանկութեան : Պէտք չէ շփոթել այն երջանկութիւնը, որուն հեղինակը մարդ ինքն է, անոր հետ՝ որ կախում ունի հարստութիւնէն եւ կը պահէ անհատը՝ փառքերու, պատիւներու, ճոխութեան ու կարողութեան մէջ. որովհետեւ կեանքը, Սոկրատի կարծիքով, արժէք կը ստանայ միայն պարտաւորութիւնով. մարդ աւելի շուտ պէտք է զոնէ իր կեանքը, քան թէ ըմբռնանայ իր խղճմտանքին դէմ :

Ու Սոկրատ, իր ամբողջ կեանքի տեւողութեան մէջ, գործադրեց իր վարդապետութիւնը, որուն հետոյն ու մարտիրոսն եղաւ: Հետոյն, ըսի, որովհետեւ անարդար կերպով ամբաստանուած՝ իր դատաւորներուն հետ այս լեզուն դործածեց. « . . . Եթէ նոյն իսկ այս վայրկեանիս առաջարկէք զիս ազատել՝ ինձի ըսելով. — Սոկրատ, քեզի ազատ պիտի արձակենք, բայց պայմանով՝ որ զու հրաժարիս այսուհետեւ քու վիճարանութիւններէդ ու փիլիսոփայութիւնէդ, ապա թէ ոչ պիտի մեռնիս. — պիտի պատասխանեմ ձեզի: — Աթենացիներ՝ եր, ձեզի կը յարգեմ ու կը սիրեմ, բայց պիտի հնազանդիմ, աւելի շուտ, աստուածութեան՝ քան ձեզի, եւ որչափ որ կարենամ, չպիտի դադրիմ երբեք փիլիսոփայելէ, յորդորներ ու խրատներ տալէ, իմ սոխորական լեզուիս, ամէն անոնց՝ որ պիտի հանդիպիմ . . . Ուրեմն հիմա, կրնաք հաւատալ իմ ամբաստանիչներուս կամ ոչ, կրնաք ձերբազատել զիս կամ դատապարտել. ես երբեք ուրիշ տեսակ չպիտի կրնամ վարուիլ, եթէ նոյն իսկ հազար անգամ մեռնիմ »:

Բայց իր ազատութիւնը կատարողները շատ հեռու էին զինքը հասկնալէ. ու Սոկրատ իրեն գաղափարին մարտիրոսն եղաւ՝ ճաշակելով « գառնութեան բաժակ »ը՝ որ իր մահն էր:

Սոկրատ գրաւոր ոչինչ ձգած է մեզ. բայց, իր օրով, կը պարտէր ամէն տեղ, փողոցներու մէջ, խանութներու առջեւ ու հրապարակներու վրայ, եւ կ'ուսուցանէր, մտերմական խօսակցութեան ձևին տակ, ամենէն մաքուր ու ամենէն ազնիւ փիլիսոփայութիւնը՝ որ, այսօր, բացարձակ հիմը կը կազմէ գրեթէ բոլոր փիլիսոփայական վարդապետութիւններու:

Սոկրատի ազդեցութիւնը, աստիճանաբար, ներգործեց իրեն յաջորդող բոլոր փիլիսոփաներուն վրայ. բայց այդ ազդեցութիւնը շատ զօրաւոր է մանաւանդ, իր աշակերտին, Պլատոնի (427-347) վրայ, որուն բարոյականը գեղարէ գանազանել Սոկրատինէն. որովհետեւ Սոկրատը ծանօթ է մեզ գրեթէ միայն Պլատոնի միջոցով, որ եղած է գաղափարի փիլիսոփան: Իրեն համար, տրամաբանօրէն յշացուած գաղափար մը աւելի ճշմարիտ է քան նիւթական իրականութիւնը՝ որ կ'ազդէ զգացումներուն վրայ. եւ կը հաւատայ թէ գիտութեան վերջին բառը, գաղափարներուն գաղափարը, իմանալի աշխարհի արեւը, բարիի գաղափարն է միայն:

Այն աշխարհը, զոր մենք կը տեսնենք, փոխ առնուած գոյութիւն մը միայն ունի, եւ զայն կազմող առարկաներն անխմատ ու անկայուն բաներ են. ուստի մեր երջանկութիւնը պէտք է փնտռենք, ոչ թէ զգայնական կիրքերու եւ շօշափելի նիւթին մէջ, որոնք, Պղատոնի համար, լոկ ստուերներ են որ ասուպներու նման կուգան ու կ'անցնին, տխուր ու անխմատ հետքեր միայն թողնելով մեր վրայ, այլ մեր ամբողջ ուշադրութիւնն ու գործունէութիւնը կեդրոնացած պէտք է լինի գերագոյն գաղափարին վրայ, որ է Բարիի գաղափարը, որովհետեւ յաւիտենական, անսասան ու բացարձակ բարին՝ Աստուած ինքն է:

Պղատոնի վարդապետութիւնը, որ իրեն հիմ ունի բարիի գաղափարն ու աննիւթականութիւնը, թերեւս լինէր ամենէն լաւ միջոցը՝ յաւիտենական դարերէ ի վեր երազուած երջանկութեան հասնելու, քանի որ, նիւթէն բաձր ու կիրքերէն հեռու, կ'առաջնորդէ մտքի մտացածին աշխարհի մը մէջ, ուր՝ երեւակայութեան վառվառ յոյսերով տոգորուած, պիտի կրնայինք կամովին մոռնալ մեր բոլոր աշխարհային վիշտերն ու մտահոգութիւնները, վէրքերն ու տառապանքները, եւ անարատ զգածումներով ու ամբիժ հոգիով ձեռք առնել յաւիտենականութեան դուռը՝ որմէ ներս կը բնակի անժամանակ Բարին՝ Աստուած: Բայց երբ մարդ յուշքի կուգայ իր վարդաման երազներէն ու կ'իջնէ իրական աշխարհը. . . ո՛վ յուսախաբութիւն. . . ցընորքները կ'անէանան մշուշի մը պէս, որ տեղի կուտայ արեւի ճառագայթներուն, ու զրական մարդը, որուն իւրաքանչիւր մասնիկները նիւթերէ միայն կազմուած են, եւ որուն համակ էութիւնը նիւթերու մէջ ու նիւթերով կը սնանի ու կ'ապրի, յանկարծ կանոգ կ'առնէ տեսանելիին, շօշափելիին առջեւ, զոր վայրկեան մը մոռնալ ուզած էր:

Արիստոտ (384—322) շատ անգամ կը հակասէ Պղատոնին, որուն անկախ աշակերտ մը եղած է: Իր փիլիսոփայութիւնը, քանի մը էական կէտերու մէջ, կը տարբերի իր վարպետինէն, որ գաղափարներու սկզբունքէն երբեք չի հեռանար, թէեւ ինք ալ, իր նախորդին բարոյականը սքրբագրելով հանդերձ, կը պահպանէ անոր գաղափարական ձգտումները, լոկ այն տարբերութեամբ՝ որ աւելի ճիշտ ու որոշ է իր բարիի վերլուծութեան մէջ, եւ, հետեւաբար, աւելի վստահելի առաջնորդ մը՝ ընկերական կեանքի առաքինութիւններուն:

Արիստոտ, Սոկրատի եւ Պղատոնի պէս, կը գտնէ բա-

րի զաղափարին մէջ՝ տիեզերքի ամենավեհ բացատրութիւնն ու իրերու գերագոյն միտքը. իրեն համար՝ «բարիէն եւ աստուածային կատարելագործութենէն կախուած են երկինքն ու ամբողջ բնութիւնը» : Բայց Արիստոս աւելի մեծ արժէք կը ստանայ մեր առջեւ, որովհետեւ աւելի կ'ընդլայնէ իր մտածողութեան հորիզոնը, ու՝ աւելի սուր աչքերով կը դիտէ այն անդադրում ու անվերջ շարժումը որ կը ձգտի գէպի վեհագոյն ցանկալին, վսեմ իմացականը, որմէ հրապուրուած են բոլոր էակները, ոմանք անգիտակցաբար, ուրիշներ համոզումով՝ որովհետեւ իրենց գործունէութիւնն ընկերացած է միշտ բանակախորհուրդի : Ուրեմն, կը մտածէ Արիստոս, — եւ իրաւունք ունի, — այդ ցանկալիին հասնելու միակ ու անխուսափելի միջոցն է մեր գործունէութիւնը վարել միշտ բանակախորհուրդի, այսինքն՝ նախ լրջօրէն քննել, գտել, ընտրել եւ ապա գործել, որովհետեւ մարդը կը շարժի ու կ'ապրի, ո՛չ թէ բնազգաբար՝ ինչպէս կենդանիները, այլ իմացականօրէն՝ որ կը նշանակէ կառնի :

Արիստոս, իր վարդապետութեան մանրամասնութիւններուն մէջ, կը ներկայանայ ճշտագոյն բարոյագէտ մը, աւելի գրական՝ քան Պլատոն : Հոն է որ կը ճանչցուի իր գործնական հանճարը, որ ամէն բանէ առաջ՝ հոգատար է փորձառութեան ու իրողութեան : Իր գործերուն մէջ, նա մըտադրազ կ'երեւի նկարագրելու իրերը՝ ինչպէս որ են, եւ նշանակելու՝ թէ անոնք ինչպէս պէտք էր որ լինէին :

Արիստոս համոզուած է որ հաճոյքը կ'աւելնայ գործին վրայ ու գոյն կ'ամբողջացունէ, եւ լաւագոյն հաճոյքը կ'ընկերանայ միշտ լաւագոյն գործին. ուրեմն մէկ մաս կը կազմեն երջանկութիւնն ու կատարելագործութիւնը, որոնց հասնելու կը ձգտին — ինչպէս փորձառութիւնը ցոյց կուտայ — մարդիկ առհասարակ : Ս.յս պատճառով, սոյն բարոյականը կը կոչուի նաեւ բարոյականութիւն (Eudemonisme), բայց բանաւոր (rationel) բարոյականութիւն մը, զոր երբեք պէտք չէ չփոթել շանի բարոյական վարդապետութեան հետ. որովհետեւ հաճոյքի արժէքը կը չափէ գործի կատարելութիւնէն. մինչ շահադիսականութիւնը (utilitaire) կը գնահատէ գործը՝ միայն իր առթած հաճոյքէն : Ճիշտ է որ, Արիստոս կ'ընդունի՝ թէ առողջութիւնն ու բարեկեցութիւնը կարեւոր են երջանկութեան. բայց կ'ուզէ որ պարկեշտութիւնը գերազասուի միշտ օգտակարէն ու հաճելիէն. այնպէս որ, եթէ հարկ լինէր ընտրութիւն ընել

առանց հաճոյքի առաքինի կեանքի մը եւ առանց առաքինութեան հաճելի կեանքի մը մէջ, պէտք էր նախամեծաբութիւն տալ առաջինին :

Արիստոտի համար, առաքինութիւնը հիմք գրած է մարդուն բնութեան ու բարեախրութեան մէջ, որովհետեւ հոգին ծնած պահուն կը բերէ իրեն հետ բարի յատկութիւններ, որոնք արժէք կը ստանան միայն այն տեսն, երբ անոնք կը լինին մշտական սովորութիւն : Պէտք չէ երբեք յսել անոնց՝ որ խորհուրդ կուտան զբաղիլ միայն աշխարհային եւ անցաւոր բաներով, քանի որ մարդ եւք եւ հետեւաբար մահկանացու . ընդհակառակը, մարդ պէտք է ամէն ջանք չինայէ՝ ինքզինքն անմահացնելու համար :

Նկատի ունենալու է սակայն, որ մարդ մը կատարելու է, նախ, իր պարտաւորութիւնն՝ իբրեւ մարդ . այսինքն՝ եթէ կ'ուզէ իր բարոյական բարձրութեան հասնիլ, մէկ կողմ գրած իր անձնականութիւնը, պէտք է ապրի ան ընտանեկան ու ընկերական շրջաններու մէջ, միանալով անոնց հետ մտերմական ու բարեկամական կապերով, որովհետեւ բարեկամութիւնն ու արդարութիւնն ընկերական կեանքի առաքինութիւններն են, եւ թէ՛ « ոչ իրիկուան աստղն եւ ոչ ալ առտուան աստղն այնքան զեղեցիկ են ու հիացում կը ներշնչեն, որքան արդարութիւնը » :

Արիստոտ հին ժամանակի ամենէն մեծ հանձարն է, ապահովարար, եթէ նկատի ունենանք իր յայտնած բազմաթիւ բարձր մտածութիւններն ու խոր ակտութիւնները, որոնք, գիտութեան յառաջգիմութեան հետ, աւելի ու աւելի կը հաստատուին, եւ իր բարոյական ճառերը պահած են միշտ միեւնոյն թարմութիւնն ու շահագրգռութիւնը . որովհետեւ անոնք կը հանգչին ընկերական կեանքի ներկային վրայ՝ բոլորովին սարբեր Պղատոնի քարոզած ակաունի վերացական երանութիւններէն :

Բայց Արիստոտի բարոյականն ալ կը պարունակէ մեծ սխալ մը զոր պէտք է վերագրել, անշուշտ, ժամանակակից քարբերուն : Կը կարծէ ցոյց տալ՝ թէ գերուշիակը պիտանի եւ օրինաւոր է, առարկելով որ Բարբարոսը, իբրեւ անպէտք ու անզգայ մեքենայ, ստրկարար պէտք է ծառայէ Յոյնին, որ միայն խելացի է ու կարող իմացական բարձր գործառնութիւններու : Մարդկային իրաւունքներու եւ եզրայրակցութեան գաղափարն անձանօթ էր դեռ . ան, բարոյական սկզբունքներու պատմութեան մէջ, երեւան եկաւ միայն ստոյիկեաններու հետ :

ԳԵՂԱՐՈՒԵՍՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գեղարուեստն առհասարակ, նկատուած է, ստէպ, գրականութեան ստորագասեալը, եթէ կարելի է այսպէս ըսել. ու եղած են նոյն իսկ մարդիկ որ պնդած են թէ չկայ գեղարուեստ առանց գրականութեան: Թէ ո՛րքան այսպիսի տեսութիւն մը հիմնաւոր է, շահեկանութիւնէ թերեւս զուրկ չէր լիներ՝ խօսիլ ատոր վրայ:

Խօսքերն իս մասնաւորելով նկարչութեան վրայ, կը գտնենք որ ան տարբեր կերպով սահմանուած է՝ տարբեր անձերու կողմէ. — Նկարչութիւնը գոյներու չափաւոր եւ իմաստուն գործածութիւնն է: — Արուեստ մը որ կ'արտաբերէ կտաւին վրայ խտէալ մտածում մը, գաղափար մը: — Արուեստ մը որ գրականութիւնէն կը ծնի եւ ունի իր մասնաւոր օրէնքները, որոնց պէտք է հպատակի: — Անիկա՛ իբր չափուած, ձեւուած արուեստ մը ենթակայ է քննադատութեան, եւայլն:

Երբ քննենք արուեստի ըմբռնումը՝ արուեստագէտին միտքին ու սիրտին մէջ՝ ըլլորովին տարբեր եղրակացութիւններու պիտի յանգինք: Արուեստագէտը, նկարիչը, կը գծէ բնութիւնը, կը նկարէ ինչպէս որ կը տեսնէ կամ կը սիրէ տեսնել, յղանալ զայն: Նիւթի ծնունդն ինքնաբեր է իր մէջ, ու միտքը զայն կը ծնի այնպէս ինչպէս որ, ինքը, արուեստագէտը կ'զգայ: Կ'ընդունինք թէ արուեստագէտի զգացումները, որ ա՛յնքան ճկուն են ու նուրբ, կարելի չէ՛ իրենց որոշ բնատիպութեան (originalité) եւ ծնունդին մէջ, որ եւ է քննադատութեան կամ վիճարանութեան ենթարկել, այդ պահուն միայն կը գուշակենք, դիւրաւ, վերը զծուած սահմաններու ճշգրիտ արժէքը:

Արուեստին ճշմարիտ կողմը փնտոելու համար երբ հանրութեան կարծիքին դիմենք, խիստ հեռուները պիտի եր-

Թանք, ու կորսուինք ապարդիւն խարխափումներու մէջ: Նկարի մը առջեւ ենք. ստէպ ջանացած ենք անոր բուն գաղափարը, նպատակը վերլուծել, ու այդ ջանքին մէջ՝ մենք բոլորս գրեթէ իրարու հակասած ենք: Քանի՛ քանի անգամներ արգեօք ինձ չէ պատահած տալ այս կամ այն իւզանկարին գրականական արժէք մը, մինչդեռ ուրիշի մը՝ արուեստին նրբութիւնները գնահատել: Ու իմ բոլոր ճիւղերուս մէջ, ես համագրւած եմ, որ՝ եթէ ոչ ընդ միշտ, գոնէ մեծ մասամբ՝ արուեստագէտին նկարին բուն ոգիին չեմ թափանցած. ու հակառակ պարագան հակարնական պիտի լինէր: Ես եւ արուեստագէտը չենք միեւնոյնը, քանի որ տարբեր անձեր ենք: Տարբեր անձեր ենք, հետեւաբար տարբեր բնութիւն ունինք, տարբեր կը տեսնենք ու տարբեր կը խորհինք: Դարձեալ, ի՞նչպէս կարելի է խորհիլ, տեսնել այնպէս՝ ինչպէս արուեստագէտ մը, որ տէրն է այն նիւթին զոր ինքը յղացած է. ո՛չ թէ միայն յղացած լինելուն համար, այլ եւ աւելի թափանցող, զըննող ու հասկացող մ'ըլլալուն: Արուեստագէտին աչքը, առաջին ակնարկով, որ եւ է տեսարան իր բոլոր սահմաններուն եւ ամենապզտիկ մանրամասնութիւններուն մէջ կը չտփէ ու, այս վերջիններուն կը դրոշմէ իր միտքի խկատիպութիւնը՝ տալով անոնց գոյն ու հոգի. կը ներգաշնակաւորէ զանոնք իր երեւակայութեան պատկերներով՝ որուն կը միացնէ բնութեան ներշնչած ամենագեղեցիկ ըմբռնումներէ ծագած նուրբ ճաշակը, բնականն իր կոշտ, բայց բանաստեղծական ձեւին մէջ:

Ու գծել որոշ սահման մը, պարտաւորցնել որ արուեստագէտն անկից դուրս չելլէ, այդ կը նշանակէ անոր յղացումները սահմանափակել, երեւակայութիւնը սահմել, ըմբռնումներն օտարացնել, անձնականութիւնը ջնջել եւ վերջապէս, կախաղան մը բարձրացնել արտադրող, ստեղծող եւ արդիւնաբերող ոգիին: Քննադատութեան առաջ բերած այս յոռի հետեւանքները, կարելի է առանց վարանելու ըսել, թափած են, յաճախ, իրենց վատթարացընող ժահրը՝ սկսնակ արուեստագէտներու հանձարին ու բը-

նատուր ձիրքերուն վրայ. ու քանին՝ ր անոնցմէ, ար-
դեօք, ամուլութեան չեն դատապարտած: Ունենալ իրեն
առջեւ չուկէտ, ուղի այս կամ այն տեսութիւնը, տա-
տամսութեան եւ կարկամութեան դատապարտել ըսել է իր
անհատական ձեռներէցութիւնը. տեսութիւն մը որ իրե-
նը չէ. տեսութիւն մը որ միակողմանի է եւ յաճախ մշու-
չապատ: Գրականութեան ուղղիչ գերը ներփողոզները, գե-
ղեցիկին ընդունումին մէջ, մեղ համար անոնք են, որ,
իւրօք, սահմանափակ միտք մ'ունին: Խիստ հեռունները կ'եր-
թան ու շատ անգամ ծիծաղելի ըլլալէ յետոյ՝ արգահա-
տանքի ջախջախիչ մրցանակին կ'արժանանան: Ու ինչ-
պէս կարելի է լիճաբանիլ չարժումի մը, ծալքի մը թո-
ղած ծիրին՝ եւ պարտէզի մը, ծառուղիի մը գունազեղ գե-
ղեցկութեան վրայ: Քանի որ արուեստագէտը կը նկարէ
ամենէ գեղեցիկ տիպարները, ամենէ զարդարուն եւ հիա-
նալի դիրքերը, վեհաշուք եւ տպաւորող կեցուածքները՝
իր միակ գերը զանոնք ամբողջապէս լրացնելուն մէջ կը
կայանայ: Այս պարագային՝ անիկա ճշմարիտին կը մեր-
ձենայ, զայն կը դիտէ ու կ'անձնաւորէ գեղեցիկին փայ-
փայլումներով: Ազդակին ճշգրիտ ծանօթութիւնն է միայն,
որ կեանքի ամենէ գեղեցիկ անձնաւորումին եւ կոչումին
զարկ կուտայ: Ու այսպիսի տեսութիւն մը ընդհանուր է,
որ կը տարածուի գրականութեան վրայ ալ, ու անոր հե-
րոսները կ'ստեղծէ: Չենթարկել զինքն ու իր զգացում-
ները՝ որ եւ է օտար ազգեցութեան խիստ լաւ կ'արժէ.
քան ինչ որ արուեստակեալ է, բռնազբօսիկ եւ անբնական:
Գրեցէ՛ք կեանքի վրայ, երբ գրական մարդ էք, ինչպէս
որ դուք զայն կը տեսնէք ու կ'զգաք, եւ ձեր գրածները
լաւագոյնները պիտի լինին օր մը: Արուեստ եւ արհեստ
միշտ անկախութեան մէջ են. սիրել զանոնք ու փարիլ
անոնց, անոնց տէրը լինել է. ու անկախ հոգին իր բնա-
կան ներշնչումներուն մէջ ճշմարիտն է, գեղեցիկն է եւ
բանաստեղծականը:

Ե՞րբ արուեստագէտը չի կրնար իր անկախութիւնը պա-
հել: Միայն մէկ պարագայ կայ, այսինքն երբ ան կը կա-

տարէ յանձնարարութիւն մը. այս վերջին պահուն նկարը, այլեւս, արուեստագէտին յղացումէն սարբեր եւ զգացումին օտար պայմաններու մէջ կը գտնուի. արթիստին կը մնայ միայն զայն նկարել ինչպէս որ կը պահանջուի, դժուած եւ չափուած սահմաններու մէջ: Այս Խորհրդ պարագային տակ, վերլուծել գեղարուեստը, անոր վրայ տեսութիւններ ընել ոչ հետաքրքրական է եւ ոչ ալ շահեկան:

Ու այս խորհրդածութիւններէն կը հետեւցնենք, թէ այսպէս դաւանուած գեղարուեստի մը մէջ յղանալու կամ տեսնելու քանի մը եղանակներ կան, բառին ամենէ անձուկ նշանակութեամբ, — Մտարբերել որ եւ է դորձ արուեստին ոյժին միմիայն հետեւելով. ներմուծել հոն շատ թէ քիչ իմաստասիրական գաղափար մը եւ, վերջապէս, ժուժկալութեամբ բարոյացնելու աշխատել նիւթին խորհրդանշանական աշխարհը կարելի եղած պարզութեամբ:

Վերջացնելէ առաջ գիտել տանք դարձեալ, որ նկարիչի մը համար, այժման առիթներ կան տարբեր նիւթեր որոճալու, որ, ստէպ, անիկա ենթակայ է խառնելու՝ իր միտքին մէջ շրջող երեւոյթ մը ուրիշ գաղափարներու հետ, արտագրելու համար մի տեսլական գործ որուն բացատրութիւնը ոչ ոք կրնայ տալ, նոյն իսկ ինքը հեղինակը: Ու պարզութիւնը, այսպիսի անտեղութիւններու հանդէպ, կարելի է նախամեծարելի ուղղութիւն մը համարել:

Թէ՛ գեղարուեստի՝ մասնաւորապէս նկարչութեան մէջ, գրականութիւնը ուրկէ կ'սկսի եւ ուր կը վերջանայ, ատիկա ճշտել խիստ տարակուսելի է: Ու ըսել թէ գեղարուեստը գրականութենէն պիտի ներշնչուի՝ առանց անոր ենթակայ լինելու, թերեւս ամենէ խելացի հայեցողութիւնն ըլլար:



Ա ՍՈՐՊՈՆԸ

—Կր հրատարակենք ստորեւ, մեր հանգէսի յարգելի Արտօնատէրին (Gérant), — Պ. Շարլ Պօլիէօ, գիտութիւններու աօքթէօն եւ օգնական գրադարանապետ Փարիզի Սորպոնին մէջ, — առաջին յօդուածը: Մեր կարող աշխատակիցներու մէջ կարեւոր անդ մը պիտի բռնէ անիկա: Իր յօդուածներով, մեր ընթերցողներուն պիտի ծանօթացնէ, հետըհետէ, Սորպոնէն սկսած, կարգ մը բարձրագոյն վարժարաններու նպատակը, ու ցոյց պիտի տայ թէ ի՞նչ միջոցներով օտարական մը, մասնաւորապէս հայ ուսանող մը, պիտի կարողանայ լաւապէս անոնցմէ օգտուիլ: Մեր գիտնական աշխատակիցը միայն, քան ուրիշ որ եւ իցէ մէկը, այդպիսի աշխատութիւն մը լիապէս պիտի կատարէր խիստ մօտէն ծանօթ ըլլալով, իբր Ֆրանսացի, Ֆրանսական վարժարաններու կազմակերպութեան եւ պատմութեան վրայ: Իր յօդուածները, դարձեալ, պիտի լուսաբանեն շատ մը կէտեր, որ նոյն իսկ մենք, հոս, Փարիզ կ'անգիտանանք, ու ուսումնասիրութեան նիւթ պիտի մատակարարեն ամեն անոնց որ վարժարանական հարցերով կըզբաղին:

Յետաձգուած է, այս պատճառով իսկ, Առեւտրական վարժարաններու վրայ գրուած յօդուածը զոր խոստացած էինք հրատարակել Հաւնախարանի այս թիւին մէջ: —

ԽՄԲ.

Հայ երիտասարդ ուսանողը Փարիզ կը հասնի: Մայրաքաղաքին գլխաւոր գեղեցկութիւններով հետաքրքրուելէ առաջ, անիկա Սորպոն կը վազէ. այնքան անյագ է իր դարձանալու փափաքը:

Բայց հոն՝ մէկէ աւելի յուսախարութիւններ իրեն կ'սպասեն, ու եթէ չառաջնորդուի Սորպոնին արգէն ծանօթ հայրենակիցէ մը, կամ Ֆրանսացի բարեացակամ ուսանողէ մը — այս վերջիններէն շատեր կան. անոնց դիմեցէք առանց տատամսելու, եւ որ եւ է դժգոհութեան առիթ չը պիտի ունենաք —, ան պիտի կորսուի դասախօսութիւն:

ներու եւ ֆոնֆերասներու ճոխութեան մը մէջ, այնպէս՝ ինչպէս, նոյն իսկ իր առաջին քայլին, պիտի շուարէր ու կորսուէր Սորպոնի միջանցքներու (couloirs) եւ սանդուխներու մանուածներուն մէջ:

Սորպոնը՝ իրօք, որուն վերաշինութիւնը գրեթէ աւարտած է, կը ներկայացնէ Փարիզի ամենէ ընդարձակ եւ հոյակապ շէնքերէն մէկը: Ունենալով լայնածաւալ ուղղանկիւնի մը ձեւը, իր շինութիւններու երկար շարքը կը տարածէ Montagne St^e Genévièveի վրայ. անփառունակ բլուր մը՝ որ montagne { լեռ } անունով մկրտուած է այն մկնիկէն (le jeune rat) որուն վրայ կը խօսի Լա Փոնթէն:

Դէպի կեդրոնը կը կանգնի գմբէթը Ռիչլիէօի կառուցած մատուռին՝ որ կ'ամփոփէ այդ մեծ մարդուն ոսկերտիքը. մինչ դէմը, բարձրաբերձ Վիկտրի մը նման, կը ցցուի Գիտութիւններու Ֆախլըքիճ գիտարանը. քառանկիւնի աշտարակ մը՝ որ նոյնպէս կ'աւարտի փոքրադիր գմբէթով մը:

Սորպոնը ամբողջ թաղի մը տեղ կը գրաւէ, ու դարձեալ, երբէք բաւական մեծ չէ, որովհետեւ աշխարհ մը մարդ կը պարունակէ:

Իրեն մաս կը կազմեն Գիտութիւններու, Դպրութիւններու Ֆաքիւլթէները, ու, այս տիտղոսին տակ, ան ուսումներու գիտութիւններու կեդրոնն է, ամենէ մեծը Ֆրանսայի համալսարաններուն, Փարիզի համալսարանը (Université de Paris):

Սորպոնին կը պատկանին դարձեալ, էֆօլ Փրաքիֆ Տէ Զօր գ'էքիւսը եւ էֆօլ սէ Շառքը, որոնց վրայ պիտի խօսիմ յարմար առթիւ: Վերջապէս, Սորպոնին մէջտեղը կը գըտնուի Համալսարանի Գրադարանը, որ իր շքիղ սրահները կը բանայ՝ մայրաքաղաքին երիտասարդ ընթերցողներուն առջեւ:

Իւրիւն է գաղափար կազմել, այն երթեւեկի եւ շարժումին վրայ, որով ոգեւորուած են իր վեհ եւ սարսուտեսիլ միջանցքները, երբ աչքի առաջ ունենանք թէ վերոյիշեալ չորս վարժարաններն ի միասին՝ չորս հաղարէ

աւելի՛ կանոնաւորապէս արձանագրուած ուսանողներու թիւ մը կը հաշուեն . ու ասկից զատ , բազմաթիւ ազատ ուսանողներ հոն կերթան՝ ունկնդրելու Ֆրանսայի ամենէ հռչակաւոր փրոֆեսորներու դասախօսութիւններուն :

Բայց եթէ աշակերտները բազմաթիւ են դասատուներն ալ այնքան են . ու դասախօսութիւններն առաքօրէն կը խոնին : Կարելոր է ուրեմն , որոշել Սորպոնի մաս կազմող իւրաքանչիւր վարժարանի նպատակը եւ հոն տրուած դասերու բնոյթն ու արժէքը :

Պիտի խօսիմ նախ , Դրականութեան վարժարաններու վրայ : Կը գտնուին ասոնք Սորպոնին մէջ , եւ երեք հաս են . Դպրութիւններու Ֆաքիւլթէն , լ' էքոլ տէ Հօթ զ' էթիւտն (Բարձր Ուսուցիչներու գործնական վարժարանը) եւ էքոլ տէ Շարթը :

Փարիզի Դպրութիւններու Ֆաքիւլթէն , ինչպէս նաեւ նահանգայինները , կրկին նպասակ ունին . 1. Պատրաստել երկրորդական՝ ինչպէս նաեւ բարձրագոյն կրթութեան համար ուսուցիչներ , 2. Արժարժել գրականութեան , պատմութեան եւ փիլիսոփայութեան ճաշակը՝ հանճարեղ եւ զարգացած անհատներու մէջ , որ թէեւ իրենց սեպհական եւ ուրոյն աշխատութիւններն ունին . սակայն կը սիրեն իրենց միտքի մշակումն առաջ տանիլ :

Ասկից բնականաբար կը հետեւի որ Դպրութիւններու Ֆաքիւլթէին դասախօսութիւնները , ուսանողներու եւ սպարէզի մէջ եղող անձերու ուղղուած կրկին պարագաներուն մէջ , ունին կամ մանկավարժական եւ կամ ժողովուրդականացումի յատկութիւն մը : Հայ ուսանողին խորհուրդ կուտամ որ հասարակաց կոչուած դասախօսութիւններու քիչերուն հետեւի : Ոչ թէ շահագրգիռ չեն , բոլորովին ընդհակառակը , այլ , քանի որ անոնք կ'ուղղուին ընդհանուրին , ուսանողները խիստ քիչ պիտի օգտուին , քան թէ այն ֆոսֆորաններէն որ իրենց վերապահուած են :

Արդ , փո՛ւք Աստուծոյ , այս վերջինները բաւական չատ են : Եթէ ուրեմն , Հա՛յ բարեկամս , կը պատրաստուիք ուսուցչութեան (professora) , հետեւեցէ՛ք Սորպոնի այդ

ֆոնփերաններուն. հոն պիտի գտնէք գործնական յատկանիշ ունեցող դասընթացքներ որ ձեզի ուղղակի կերպով ուսուցչութեան այնքան դժուարին ու փափուկ պաշտօնին նախաձեռնութիւնը պիտի տան: Եթէ ընդհակառակը, արդէն ունիք բաւական բարձր զարգացում մը, եթէ կ'ուզէք ծանօթանալ ճշմարտապէս գիտական մեթոտներու, պէտք է որ յաճախէք էֆօլ Փրաքիֆ Տէ Հօր զ'էքիւսը:

Իր լայն սահմաններուն մէջ Դպրութիւններու Համալսարանին ուրուագիծը եւ իր ու էքօլ տէ Հօթ զ'էթիւտի մէջ եղած կարեւոր տարբերութիւնը մատնանիշ ըրի, այս անգամ. առաջիկայ յօդուածովս պիտի խօսիմ այդ երկու վարժարաններու վրայ աւելի մանրամասնաբար:

CHARLES BEAULIEUX

Surnum^{re} à la Bibl. de l'Université de Paris

ՄԻՍԱՔ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՏ

ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՄԷՋ

Գ.

Մինչ ելեքորականութիւնը ճշմարիտ լուսաւորութեան մը, մի անգամ ընդմիջաւ ձեռք բերուած, աղբիւրը կը կարծուէր, նոր կազ մը զայն գրեթէ անգործածելի դարձնելու կը ձկաի. կազ մը՝ որուն ինչպէս արտադրութեան պարզութիւնը նոյնպէս ալ գինին ածանութիւնը՝ խիստ շատ առաւելութիւններ կուտան իրեն: Այս կազը կը կոչուի ասերիլէն, եւ կ'արտադրուի իւրաքանչիւր անգամ երբ ֆլօրիտը տը ֆայսիօնը ջուրին հետ առնչութեան գնենք: Ո՛չ

միայն 15—18 անգամ աւելի լուսաւոր է, սովորական լուսաւորութեան կազմն, այլեւ գիւրագին, նուազ թուրաւորիչ եւ նուազ տաքցնող: Ապագան այս լուսաւորութեան է:

— Լուսանկարէն յետոյ գանուեցաւ սինեւաթորափը, որ հանդիսատես կ'ընէ կեանքի իսկական շարժումներուն: Մէկ վայրկեանի մէջ, իրարու ետեւէ, 500—1000 փորձ հաւանազ լուսանկարի գործի մը կ'ուղղուի ո'ւրէ կենդանի եւ ոգեւոր տեսարանի վրայ, օրինակի համար ձիարշաւի մը, պատերազմի մը, եւն. : Այս 1000 փորձերը, լոյսի projectionի (լուսաձգութիւն) մը մէջ, մեքենական շարժումով մը իրարու ետեւէ անըմիջաբար յաջորդելով ի մի կը ձուլուին եւ կը վերարտադրեն ուղղակի ձիարշաւին եւ պատերազմին տեսարանները, իրենց ամենապզտիկ մանրամասնութիւններու մէջ, — ձիերու վազքը, սուրերու ճօճումը, նետերու արձակումը, սլառօթի ծուխը, փոշին բարձրանալը, գիակներու փռուիլը . . . :

— Առարկաներն ու կենդանիները իրենց բնական գոյներով լուսանկարելու ջանքերը հետզհետէ կը պակուին, Պ. Լիփմանի եւ Պ. Ռիչարի աննկուն աշխատութիւններով:

Դ

Թշկութիւնը, ներկայ դարու մէջ, կրեց հիմնական յեղաշրջում մը, որ իր պատմութիւնը երկու գլխաւոր շրջաններու բաժնեց, որոնց կեդրոնը կը կենայ անմահն Բասդէօն: Այս մեծ գիտնականը հաստատեց անփասելի գոյութիւնը, բնութեան մէջ, մանրադիտական կենդանիներու, միքրոպներու, մանրագինին ուսումնասիրութիւններ կատարելով՝ fermentationsներու (խմորումներ) վրայ: Հաստատեց դաձեալ թէ այդ բոլորական ու կենդանական էակներն են պատճառ այն բազմաթիւ հիւանդութիւններու որոնց կենդանական աշխարհն ենթակայ է: Գտաւ գրեթէ պէտք եղած տարրերը զանոնք ոչնչացնելու եւ հնարեց հականերտմի գրութիւնը, որով կարելի կ'ըլլայ մարմնոյ ամենափափուկ մասերու վրայ առանց անաղաճեղութեան, վիրաբուժական գործողութիւններ կատարել. գործողութիւններ,

որ այնքան վտանգաւոր էին մի քանի տասնեակ տարիներ առաջ :

Պատուաստի միջոցով, ան եւիբ յաջորդները յաջողեցան այդ միջբողաներու աւերիչ գերը չէզոքացնել եւ բուժել հետզհետէ կառաղութիւնը (rage) ածխախտը (charbon) եւ տիֆթէրին :

Բասդէօնի գիւտերէն առաջ 100ին 16ը՝ կատաղութենէ բռնուողներէն կը մեռնէին, մինչդեռ այսօր հազիւ 100ին 1ը կը մեռնի : Ածխախտը՝ կենդանիներու կոտորիչ ահարկութշնամին, սարսափեցաւ Բասդէօնի ներարկած շիճուկէն ու իր ահարկու երեւոյթը կորսնցուց :

— 1894ին Բասդէօնի նշանաւոր աշակերտներէն Պ. Ռու յաջողեցաւ Տիֆթէրինի շիճուկը գտնել եւ ընդհանուր մարդկութեան մեծ ծառայութիւն մը մատուցանել : Ո՞րքան բազմաթիւ մանուկներ կարճ միջոցի մը մէջ, իրենց կոկորդին մէջ գոյացած թաղանգի մը պատճառով, շնչանեղձ կը մեռնէին . քա՛նի քանի ընտանիքներու մայրեր ու հայրեր իրենց, յաճախ, միակ զաւակին աղէտաբեր վախճանը տեսած ու ողբացած էին : Պ. Ռուի գիւտէն յետոյ այդ հիււանդութեան աղէտաբեր հետեւանքներ 80 առ 100 տկարացած են :

ՀԻՆ ՓԱՐԻԶԸ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ

1900 ի արուեստահանդէսի այն բաժինը, որ պիտի ներկայացնէ 14 — 18 դարերու Փարիզը, իր ամբողջութեամբ հիանալի գործ մ'է՝ որ մինչեւ հիմա գեռ չէ երևցած : Այս հաստատութիւնը գրաւած է արուեստահանդէսի կեդրոնական գեղեցիկ դիրքը . այցելուները Champ de Marsի որ կողմն ալ ըլլան, միշտ իրենց աչքին պիտի ներկայանայ Հին Փարիզի պարզած տեսարանը : Պ. Փիքառ, արուեստահանդէսի Մասնախումբին Նախագահը, իրաւամբ, այդ բաժինին տուաւ յարմարագոյն տեղը, որպէսզի, բոլորին ուշադրութիւնն անոր վրայ հրաւիրելով, լաւ ճանչցնէ Հին

Փարիզը՝ աշխարհի ամէն անկիւններէն եկող զրօսաչըջիկներուն : Այդ բաժինը կառուցուած է Սէնի աջ եզերքին վրայ, որ Թիւիլլորիի պարտէզէն սկսելով՝ կ'երկարի մինչեւ Champ de Marsի միւս ծայրը, Փարիզէն դուրս : Իսկ ցամաքի կողմէն շրջապատուած է ամենաշքեղ մեծ ու փոքր պալատներով, որոնց մէջ աչքի կը զարնէ Թրոֆաշերօի հին աշխարհածանօթ պալատը :

Ճարտարապետ Պ. Ռոպետան է որ՝ առաջինն՝ յղացած է այդ եզակիան ծրագիրը, ու ամէն ջանք ի գործ դրած՝ ճըշտագոյն կերպով ներկայացնելու բուն 14-րդ. դարու Փարիզի մէկ ընդարձակ թաղը, իր ամբողջ մասերով. — Թաղին եկեղեցին, քաղաքապետարանը, տօնավաճառը, ժամանակին ամենագեղեցիկ սրճարանէն սկսած ամենայեւոր գինեատունը՝ իրենց կառավարիչներով ու յաճախորդներով որ պիտի կրին նոյն դարու տարազը. նմանապէս թաղային թատրոնն ու ֆոնտէրը, ուր պիտի ներկայացուին այն ատենի բարձրու համապատասխան թատերախաղ մ'ու երգեցողութիւններ : Շուկան՝ իրեն խանութպաններով, որ իտես պիտի դնեն նոյն դարերու կահկարասիները, զարդեղէնները, եւ այլն : Գործարաններ՝ իրենց արհեստաւորներով, որ զբաղած պիտի լինին այդ դարերու աշխատութիւններով :

Այսպէս, այցելուին ո՛չ միայն պիտի հետաքրքրուի, այլ եւ դիւրութեամբ բազմաթիւներ պիտի կարողանայ ընել՝ անցած դարերու եւ ներկային՝ գիտութիւններու ըրած յառաջդիմութեան վրայ, եւ ներկայ գիւտերու վրայ խիստ որոշ զաղափար մը պիտի կազմէ :

Այս բաժինին մէջ, բոլոր շէնքերը երեք յարկէն աւելի բարձրութիւն չունին, ժամանակին ճարտարապետութեան ոճին եւ ձեւին համաձայն. այնպէս որ, շինութիւնները լաւ դիտող մը, նորութեան հետքն իսկ չնշմարելով անոնց վրայ, չպիտի ուզէ հաւատալ թէ այդ ամէնը ութ ամսուան մէջ միայն շինուած են, եւ ունին արդէն դարեր առաջ շինուած եւ հինցած շէնքերու տեսքը :

... Ու նստունով լ՛արքրնցայ : Մրքրնչայ էր ասխարհն :
Սասիկ հով կար . ու բարակ խուռ լ՛եղեալի կը պստեր
Լուսաւնու՛սիս ասպակին , որեւ հազիւ թէ լըքի
Շող ըն կուգար սեկեակիս լուսաւորել գորշ պստեր :

Ինուրք ցո՛ւրս էր . ու ցո՛ւրս էր եռյակս հոգիս կարելիք . . .
Սեբոնջ մարմինս կը հեւս՛ր յուզումներով սեկոյազին .
Ու խորհուրդներ բազմագան , կարմիր ու սեւ ուրուներ՝
Կըլուխիս լեռ , խառն ի խառն , կը պարե՛ին կ՛երգեի՛ն . . .

Սիրքս շատն՛ց պարսպ էր : Ու ես՝ խուցիս լեռ լիկանկ՝
Սորված էի ասպիլուի վիշտերուս լեռ սեկանար ,
Երբ ոզեի ֆրֆրել հիկն օրերու յիշասկ . . .

Բայց առաջին անգամն էր , որ մեկուքիւնն ինձ հաւար՝
Անտանկի կը դառնար : Խորունկ սարսու՛ն լ՛ըզգացի . . .
Սիրքս ուժգին բարասիւց . ու վերջասիւ՛նս շացի՛ . . .

Ու ես շացի՛ , անդադար , արիւն արցո՛ւնք բախեցի՛
Սեբոնջ օրեր , լի՛ս լիկանկ , սեկեակիս լեռ անտասիակ ,
Եւ դառնութեան սեւ լերուրեւ սխորժակով շախեցի ,
Յագուրդ սայռ ծիւրասիսին՝ որ կ՛արքրնար կուրծփիս ասկ :

Այնուհետեւ , ա՛յ օրերն ըսուերի պիս կը սահին ,
Կերեզմանիս կիսաբաց հողեւ ֆիչ լ՛ալ պեղելով . . .
Միկն ես ի գո՛ւր կըսպասեւ սեւեւ սիրքիս բազուկին ,
Որ ինձ կեանք էր խոսացած , զբզուանք , ժրպիս ու գորով :

Սիրքս արիւնի շին լ՛եղար , մարմինս պստան սեւ սուզի ,
Հոգիս բուրիւս՛ն լը խառնող հառաչներով ողբական . . .
Ու կեանքս անբողջ՝ հեղեղում լը յորդանաս արսումքի :

Մեկուքիւնն է իմ ընկերս ու վիշտերուս լուռ վրկան . . .
Ու գիշերներն՝ անաքակ՝ երբ անկողին կը մքսեւ ,
Կը փափափիմ ես սրտանց՝ որ ֆունիս լեռ մա՛հ զրկեւ :

ՀՐՈՒՇԱՆ

ԳԷՈՐԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

(Աշակերտ Հանգարսևական բարձ. Վարժարանի)

ՀՆԷԱԲԱՆՈՒԹ ԻՒՆ

[PALÉONTOLOGIE]

(Շար. եւ Վերջ)

Կաղապար եւ Հակակաղապար. — Գիտենք արդէն՝ թէ ծովային անասուններու խեցիները [carapaces] եւ կեղեւանքները [coquilles] կազմող տարրը, գլխաւորապէս, կիրն է: Արդ, անասունին մեռնելէն վերջ, գործարանաւոր նիւթին անհետացումով, սոյն կեղեւը ծակոտկէն վիճակ մը կը ստանայ եւ, վերոյիշեալ ազդակներու ազդեցութեան տակ, լուծուելու աւելի մեծ հակամէտութիւն ունի: Այս պատճառով, կը պատահի երբեմն, որ կեղեւին կրային մասնամբողջովին անհետանայ. բայց դրոշմ [empreinte] մը թողելով. այս դրոշմը կը կոչուի կաղապար [moule]: Երբեմն ալ, կրաքարի նոր խաւ մը գալով կը լեցնէ այդ կաղապարը. այն ատեն կ'ունենանք հակակաղապար [contremoulage] մը:

Գալով անասուններու կակուղ մասերուն՝ որպէսզի անվթար մնան, պէտք է որ անասունը բանտարկուի բոլորովին անթափանց խաւերու մէջ. կը տեսնենք ճանճեր, մեղուներ, պիծակներ, եւ այլն, որոնք սաթի եւ ուտինի մէջ կատարելապէս անվթար մնացած են:

Երբեմն ալ, կը տեսնենք մասամբ միայն պահպանուած, ինչպէս հերձաքարի [schistes] թերթերու վրայ գրոշմուած՝ ձուկերու փուշեր եւ կակուղ մասերու [թեփ, եւն] հետքեր. ինչ որ ցոյց կուտայ՝ թէ հերձաքարի խաւերը ճնշուելով իրարու վրայ՝ ճզճած են իրենց մէջ փակուած անասունները:

Նոյն իսկ, ցուրտ երթիչներու մէջ, բոլորովին անվթար մնացածն ալ կը պատահի: Այսպէս, մեր օրերը, զամուսնացան, Սիւլբերլայի հիւսիս-արեւելեան մասերուն մէջ սառնա-

կոյաներու (*) տակ անվթար մնացած ստնաւորներու եւ, մասնաւորապէս, փիղերու հետքեր :

Այսպէս գտնուած մամութի [mamouth կամ elephas primigenius] մը միան այնքան թարմ էր, որ կարելի եղաւ որսական շուներու կերցնել : Ակռաներուն մէջտեղ մնացած բոյսերէն ճանչցան անոր սնունդը . եւ, վերջապէս, ստամոքսին մէջ գտնուեցան իրեն ժամանակակից կոնաբերներու [coniferes] տերեւներ :

Բայց, ընդհանրապէս, բրածոյի վիճակին տակ մեզ հասածները, անասուններու (**) կարծր մասերուն բեկորներն են միայն եւ հետեւապէս, անկատար : Ինչ որ խորհրդածել կուտայ, թէ քանի որ կա'ուղ մասերը միշտ կ'անհետին, ուրեմն՝ անյիշատակ ժամանակներու մէջ՝ ապրած ըլլալու են կակղակազմ անասուններ, որոնք յաւէս անձանթ պիտի մնան մեզ, իրենց ոտկը կամ խնիոր ունեցած չըլլալուն համար :

Բրածոներու յարաբերական սարիք (âge relative des fossiles) . — Դիտուած է որ համանման անասուններու բեկորները միշտ նոյն խաւերու մէջ կը գտնուին . ուրեմն, անոնք ապրած են միաժամանակ : Դարձեալ, տեսնուած է որ, ամեն տեղ, երկրաբանական խաւի մը մէջ պատահած բրածոներն իրարու կը նմանին : Ասիկէ կը հետեւին երկու օրէնքներ :

1. Միեւնոյն երկրաբանական խաւին մէջ, գործարանական կեանքի ձեւն ամբողջով է (constance de la forme dans une même couche) .

(*) Դիտելի է թէ այս սառնակոյտեր բրածոյ սառնարաններ են, սառնային շրջանէն (époque glaciaire) մնացած : Ընթացողները գիտեն թէ չորրորդակ դարու մէջ յանկարծ սաստիկ ցուրտ մը պատեց երկրագունիսը, սառնարաններ լեռներու կատարներէն արշաւեցին դէպի դաշտերն ու հովիտները՝ իրենց սառուցիկ խաւերուն տակ ծածկելով մինչեւ այնատեն ապրող վիթխարի ստնաւորներու դիակները :

(**) Չպիտի ըսեմ անդրջրհեղեղեան անասուններու, ինչպէս որ սովորութիւն է ըսել մեր ազգ . վարժարաններու մէջ, հիմնուելով միայն Ս . Գիրքի պատմած ջրհեղեղին վրայ . քանի որ, երկրաբանութիւնը մէկէ աւելի ջրհեղեղներ կ'ընդունի : Ճիշդ պիտի լինէր, եթէ ըմբռնէինք վերջին ջրհեղեղէն առաջ եղած անասուններու իմաստով :

2. Չեւերը, ա՛նն տեղ, նոյն կարգով կը յաջորդեն իրարու (superposition des formes) .

Ենթադրենք, որ տեղ մը, Բւ եւ Բւ ձեւերը դասնք երկու մահաչիւր խաւերու մէջ . եթէ ուրիշ տեղ մը, հանդիպինք Բւ ձեւին, պէտք է գտնենք նաեւ Բւ ձեւն անոր տակի խաւին մէջ : Ուրեմն, բրածոներու բոլոր ձեւերը կը կազմեն շարք մը որ կ'սկսի երկրի խորերէն եւ կ'աւարտի անոր մակերեսը : Հ' տեւարար երկրաբանական սանդուխն ուրիշ բան չի ներկայցնիր, բայց եթէ անոր ժառանգազոտութիւնը :

Այսպէսով կրնանք վերակազմել իրարու յաջորդող դարերը եւ ժամանակները, ուր անասուններն ապրեցան եւ մեռան :

Հոս, դար եւ ժառանգական բաներն որոշ չափեր չեն ներկայացնիր, այլ՝ մեր միտքերու ըմբռնումէն դուրս անորոշ տեւողութիւններ : Մենք գիտենք՝ թէ անոնք ինչ կարգով յաջորդած են իրարու . բայց իւրաքանչիւրին յարաբերական տեւողութիւնն անծանօթ է մեզ :

Բարեչըջութիւն (Evolution) . — Փոխանակ յաջորդաբար քննելու դանազան դարերը, ուր անասուններն երեւցան երկրագունդի վրայ, կ'առնեն անոնցմէ դասակարգ մը, — ինչպէս ըրաւ մեծաբարդ ուսուցիչս, Պ. Douvillé, — եւ կ'ուսումնասիրեն զայն (անոր կրած փոփոխութիւնները, բարեչըջութիւնը, եւն.) իր ծագումէն մինչեւ այսօր :

Բոլոր կենդանական ձեւերն ուսումնասիրելով, կը տեսնենք որ իրենց յաջորդութիւնը կը հպատակի օրէնքերու որ բարեչըջութեան օրէնքներն են :

1. Ընդհանուր ձեւերու կատարելագործումը (Spécialisation des formes) .

2. Հին ձեւերու պահպանումը (Persistence des formes anciennes) ,

3. Ընկերային եւ անհատական զարգացում (développements phylogénique et ontogénique) .

Մարդը գերազանցօրէն կատարելագործուած, ամենէնորն է . յետոյ կուգան բարձրագոյն կարգի ստնաւորները, ինչպէս ձին :

Երբ խուճի մը սլառութիւնը, անոր աստիճանական փոփոխութիւնները կ'ուսումնասիրենք ժառանգակներու շարքին մէջ, կ'ուենանք ընկերային զարգացումը : Կրնանք նաեւ քննել անհատին կրած բարեչըջութիւնը, որով կ'ուենանք անհասակն զարգացումը . որովհետեւ դասակարգի մը երեւումէն ի վեր կրած փոփոխութիւններու շղթային գլխաւոր օղակներէն պէտք է անցնի նաեւ մէն մի անհատ :

ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Պ ա ս ր ա ս ե ց

ՄՈԳ—ՊԵՏ

Բ

Շարադրութեան տեսակները . — Նկարագրութիւն :

Հառնայաւանի նախորդ թիւին մէջ ցոյց տուինք այն ընդհանուր օրէնքները, որ հարկաւոր էին, առ հասարակ, որ եւ է գրութեան : Պէտք է զանոնք միաքին մէջ ունենալ ու ջանալ կիրարկել :

Շարադրութեան մէջ կարելի է երեք գլխաւոր բաժանումներ գնել . 1. Պատմախօսական 2. Գննախօսական եւ 2. Ճառախօսական շարադրութիւններ :

Պատմախօսական (recit) շարադրութիւնն ամենէ պարզն է . չի պարունակեր ո՛չ իմաստասիրական տեսութիւններ եւ ոչ ալ փաստաբանական մեկնաբանութիւններ : Երբ որ եւ է գէտք կը պատմենք կամ տեսարանի վրայ կը խօսինք, մեր սպաւորութիւնները կը բացատրենք ինչպէս որ են, մեր տեսածներու կարեւորութեան կարգով . ու այս բանը չ'ընէ ամեն մահկանացու ամեն օր եւ ամեն վայրկեան : Եթէ ըսենք որ այս օրինակ պատմութիւն մը, խօսակցութիւն մը՝ նոյն իսկ պատմական շարադրութեան ձեւն է, անշուշտ այլ եւս իրաւունք չպիտի ունենանք, այս ձեւին մէջ, շարադրութիւն բառին խրատելիակային իմաստէն սարսափելու : Մեր պատմութիւնը գրի առնենք, զազափարնեցու կարեւորութեան կարգը յարգենք, ըրած կը լինինք գրաւոր շարադրութիւն մը :

Շարադրութեան պատմախօսական ձեւին մէջ երկու ստորաբաժանում կը գնեն ա. Նկարագրութիւն եւ բ. Բուն Պատմութիւն (histoire) :

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ . — Ստեղծան . Երբ իր որոշիչ գիծերով կը պատմենք եւ կը ներկայացնենք որ եւ իցէ աւարկայ կամ երեւոյթ, ըրած կը լինինք նկարագրութիւն մը .

օրինակ գիւղանկարի մը եւ հրապարակի մը գեղեցկութեան, փոթորիկի մը թողած տպաւորութեան, արձանի մը նուրբ կերտուածքին պատմութիւնները :

Կենդանագիրն (portrait) ալ տեսակ մը նկարագրութիւն է, որովհետեւ կը դժէ մարդոց եւ անասուններու պատկերները :

Թե ի՞նչպէս պեճի եւ նկարագրել . — Երբ նկարագրելու նիւթերնիս աչքի առջեւ ունինք պէտք է ա. պատրաստել անոր յստակագիծը եւ բ. գայն ընդդայնել :

Նիւթերու զանազանութեան հետ յատակագիծը գործ չունի, այսինքն ան կը մնայ միշտ միեւնոյնը իր ձեւին եւ հիմին մէջ, ամեն նիւթի համար :

Չայն պատրաստելու համար նախ ջանալու է անոր գըլխաւոր գաղափարները գտնել ու զանոնք նշանակել խոշոր տառերով, Ա. Բ. Գ. եւ այլն : Յետոյ իւրաքանչիւր գըլխաւոր գաղափարի երկրորդականները համառօտաբար թուանշաններով՝ 1. 2. 3. եւ այլն, կարգաւորել :

Յատակագիծի պատրաստութեան այս աշխատութեան մէջ գիւճի եւ կարգաւորումի մեր նախապէս տուած կանոնները արմատական անհրաժեշտութիւն ունին :

Ընդլայնելու համար հոգ տանելու է մաքուր ոճ մը ունենալ, բացատրութիւններու մէջ յստակութիւն դնել ու վերջապէս, լինիլ ամփոփ եւ իմաստալից :

Նկարագրութեան մէջ, եթէ ոչ անհրաժեշտ՝ երբեմն հարկաւոր է, ձանձրանալի եւ ցամաք չերեւնալու համար՝ նկարագրելի նիւթին ընութեան եւ իրեն տրուելիք շեշտին համեմատ, դնել՝ 1. Սկզբնապսակեր մը, որ նիւթին ամբողջութիւնն ամփոփէ, քանի մը սողի մէջ, ու ընթերցողը հետաքրքրէ. 2. Եզրակացութիւն մը՝ որ նիւթին տպաւորութիւնը զօրացնէ՝ բարոյական խորհրդածութեամբ մը :

Եզրակացութիւնը մանաւանդ, առանց անպատեհութեան, կարելի է յօժարակամ զանց առնել :

Յոյց տանք օրինակով մը մինչեւ հիմա մեր տուած հրահանգները :

Նիիթ. — Երգնկայեկ ղեպի Կ. Պոլիս սանող ուղին՝ միկնել

առաջին կայսրանը : Գեղեցիստեսիդ դաշին եւ խոսքս ու սեպ
լեռներու մեջ այդ ուղիին բողոս սպարորութիւնն ու պատկերը :

Յ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

Սկզբնապատկեր . — Ուղին երկու հակառակ տեսարաններ
կը պարզէ, լեռնային եւ դաշտային :

— Ը ն գ լ ա յ ն ու մ — Նիւթն ընդլայնելու համար
կը գտնենք սեկնելու երկու աչքի ինկող կէտեր, որ կը կազ-
մեն անոր երկու գլխաւոր գաղափարները, եւ որ զայն երկու
որոշ մասերու կը բաժնեն հետեւաբար, այսինքն Ա Դաշ-
տային մաս, Բ Լեռնային մաս : Նշանակենք իւրաքանչիւր
մասին տեսարաններու քիչ մը լայնօրէն պատկերները . ա-
սոնք ալ պիտի լինին նիւթին երկրորդական գաղափարնե-
րը : —

Ա. մաս . — Դաշտային ուղին ,

1. Տորենի, գարիի եւ կորեկի դաշտեր, մարգագետին-
ներ, արօտավայրեր եւ առուակներ :

2. Ծառաստաններ, այգիներ եւ դեղեցկատեսիլ գիւ-
ղեր :

3. Հորիզոնը հեռաւորութեան մէջ :

Բ Մաս . — Լեռնային ուղին .

1. Կիրճը, իր նեղ մուտքը :

2. Լեռներու մէջ լայն բացուած վայրերն ու իրենց
այլազան տեսարանները :

3. Ուղիին անմաշկելիութիւնն ու իր պատճառած
տաղտուկը :

ՆԻԹԻՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Սկզբնապատկեր . — Այն ուղին որ կը աննի Երզնկա քա-
ղաքէն Կ. Պոլսոյ առաջին կայսրանը, Սրբեգոր (Ս. Գրի-
գոր) խիտ նկարագրէ է : Ճամբորդը հոն կը վայելէ մէկ
կողմէ բնութեան ամենէ հաճելի տեսարանները, ու միւս
կողմէ կ'զգայ ու կը կրէ անկանոն եւ լեռնային շփուարանցա-
նելի ուղիի մը անհնարին տաղտուկը :

Ա. մաս . — Ուղին, քաղաքին հիւսիսային կողմէն
կ'երկարաձգի գէպի հեռուները, ու ուրբայտոյս շեղումնե-
րով կը կարէ, յաճախ, այդ կողմը տարածուող ընդարձակ
դաշտերը : Ուռնիներ՝ իրենց սաղարթախիտ ձիւղերն եր-
կարելով ուղիին վրայ, կը ձգեն հոն մուտ ստուեր մը,
ու հակառակ կիզիչ օդին՝ կը ցանեն անուշ զովութիւն մը :

1. Աջ ու ձախ տարածուող ցորենի, գարիի եւ կորե-

կի լայնածաւալ արտեր, թաղուած շեշտուած բուսական կանաչուածութեան մը մէջ, մեղմ քաղցր հոլի մը գգուանքերով վէտովէտանալով, ալէծուի ծովի մը մանրանկարը կը պարզեն: Մարգագետիններ, հոս հոն, ընդմիջուած այս հարուստ եւ բարձրածիւն բուսականութեանն ու անոր մէջ շուրջանակի թաղուած, գաւառին նախիրներու մննդառատ արօտավայրեր կը դառնան: Ուղին կը յառաջանայ, ընկերանալով հետզհետէ գաւառը ոռոգող ջուրերու առուակներով որ իրեն կը մօտենան ու կը հեռանան, ոլորապտոյտ կը գալարին ու յանկարծ կը կորսուին հեռուները, գաշտերու խորութիւններու մէջ:

2. Մինչ այսպէս թէ այնպէս ճամբորդին աչքը տափառակ դաշտին տեսարաններու այլազանութեան մէջ կը շրջի, ուղին աւելի հեռուն կը սուզի այգիներու եւ ծառաստաններու մէջ, որ կը տարածուին բլուրներու կողքերուն վրայ, յարակցելով մէկ կողմէ քարուտ եւ խճալից տարածութեան մը հետ եւ միւս կողմէ ծրագրուելով գահավիժող հեղեղատի մը խորիջացող ջուրերով: Ոչինչ աւելի գեղեցիկ քան այն գիւղերու շարքերը, որոնցմէ հետզհետէ կը շրջապատուիս, եւ որոնց մէջէն կը սողայ ուղին սարսուռն շուքի մը խնկաբոյր մթնոլորտին մէջ: Այգիներու մէջ կը տեսնուին ցած ու մացառապատ ցանկերու վրայէն, պտղատու ծառերու խումբեր, արեգակը՝ անոնց սաղարթախիտներու մէջէն թափանցելով, գետինը տարածուող մարմանդներու վրայ լոյս կը ձրձխնէ ու հոն անուշադիր թողուած զանազան պտուղներու դէզեր ճամբորդին ցոյց կուտայ:

3. Գիւղերն երկարած գող արահետներու մէջէն ուղին բլրակն ի վեր կը բարձրանայ, երբեմն ուղիղ գիծով մը եւ երբեմն ընդմիջուած կարճ ոլորումով մը: Այսպէս, փոխադարձաբար, կը պարզուին, հեռուն, հորիզոնին վրայ, գաւառին հիւսիսային լեռներու բարձրաբերձ գագաթները, հսկայածեւ վեհութեամբ. ու, ահա, յանկարծ հորիզոնը կ'ամփոփուի, ինչպէս նաեւ երկինքի անհունութիւնը ու այսպէս քանի մը վայրկեան:

Բ. Աստ. — Լեռներու մէջ ենք, գաւառն ու իր դաշտային գեղեցիկ տեսարանները այլ եւս չկան:

1. Կիրճի մը նեղ մուտքը սեպածեւ եւ լերկ ժայռերու մէջ կը բացուի ճամբորդին առջեւ: Ուղին կ'սպորդի, հոն ալ, նեղ ու խուսափուն: Երկու հակընդդէմ կանգնած լեռներ, կը վատթարացնեն ուղին: Արեգակին ճառագայթներն անդրադառնալով քարակոյտերու բոցակէջ բովէն հեղձուցիչ տաքութեան մը մէջ կը խեղդեն անցորդը:

2. Քանի մը վայրկեանէն կիրճը կը վերջանայ. ու բարձր լեռներու կողքն ի վար, ուղին իր կանոնաւոր գիծը եւ յաճախ հետքը կը կորսնցնէ: Հոս կը պարզուին խոպան, տափարակ եւ թափ տուող բարձրալանդակներ. յառաջխաղացումն անտանելի կը դառնայ եւ ճամբորդը տաղտուկ կ'զգայ: Սակայն անմշակ բնութիւնը, իր բնական գեղեցկութեան մէջ, առաջին ակնարկով, շատ տպաւորիչ է: Փոքրիկ առուակներ բղխելով լեռներու կողքերէն՝ զառիվայրերու վրայ աղմկալից եւ անընդհատ ջրվէժումներ կը կազմեն, հոս՝ անդրադարձնելով արեւին ճառագայթներն ու բերեղի նման փայլելով, հոն՝ մտակայ ժայռերու ստուերին տակ՝ իրենց թաւալումներուն մէջ, կապոյտ ու կանաչ վէտովէտանալով: Առութիւնը, յանկարծ, կը շեշտուի. կենդանութիւնը կը կորսուի, ու լեռներն իրենց վիթխարի ու ցամաք երեւոյթով կը տիրեն հոն տարածուող միջոցին: Քանի մը կոճոտ եւ տխրատեսիլ մացառներ ու մորենիներ կը սեսնուին միայն, որ, քանի մը անգամներ, տարիին ընթացքին մէջ, կը քաղուին լեռնաբնակներէ:

3. Կը հասնի վայրկեան մը, որ ճամբորդը ժայռերու կոյտերու մէջէն կ'ընթանայ միայն. ուղին կորսուած է բոլորովին: Տաղտուկ մը սիրտն ու հոգին կը գրաւէ, ժամերն անհունապէս կ'երկարին: Կը յոգնի անիկա, ու իր հոգին երբեմն լեռներու առթած արհաւիրքի ամփոփ եւ զսպանակաւոր տպաւորութեան տակ եւ երբեմն ալ ուղղիին վախճանին հասնելու ճիգին մէջ՝ շատ մը զգայնիկ վիճակներէ կ'անցնի: Կ'ուզէ խոյս տալ այս վերջին վայրերէն ու, վերջապէս, հեւ ի հեւ, կը հասնի կայարանը, Ս. Գրիգոր:

* * *

Այս նկարագրութեան մէջ զանց ստնուած է եզրակացութիւնը: Միեւնոյն բանը կարելի էր ընել սկզբնադասակերին համար: Դարձեալ, գրութիւնն աւելի ազդու եւ յուզիչ ընելու համար, բնութեան տարբեր պատկերներու հետ, գրեթէ անընդհատ, խառնուեր է ճամբորդին կամ մարդուն անհնց տպաւորութեան տակ, տարբեր զգայուն վիճակները:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա մ փ ո փ ե ց

Ն Շ Ա Ն

Օ Դ Ա Յ Ի Ն Ն Ա Ի Ը

Օգային հեղուկին գիւտը հազիւ թէ լմնցած կը հա-
մարուէր, ուրիշ նորագոյն գիւտ մը, օգային նաւին ղե-
կաւորումը, անոր կը յաջորդէ: Մէկը թէ միւսը՝ իրարմէ
կարեւոր՝ ընկերական կեանքի զանազան պէտքերու լրացու-
մին մէջ՝ իրենց մատուցանելիք ծառայութիւններով, քա-
ներորդ դարը այն ինչ թեւակոխած, կը ձգտին հոն մեծ
յեղաշրջում մը յառաջ բերել. յեղաշրջում արուեստներու
մէջ, յեղաշրջում ժողովուրդներու յարաբերութեան եզանա-
կին մէջ եւ, վերջապէս յեղաշրջում նոյն իսկ, գիտութեան
մինչեւ հիմա ընդունած եւ ընտրած շատ մը մեթոտներու
մէջ. որոնցմով, յաճախ, անոր անծանօթ ճշմարտութիւն-
ները կը փնտռուէր: Ու քսաներորդ դարը ո՛րքան գիւտեր
չի վերապահեր տակաւին մարդկութեան. ու գուցէ այս
վերջինին ճակատագիրը խիստ տարբեր լինի, խիստ աւելի
նախանձելի՝ քան մերն այսօր, բազրատմամբ այն ժողո-
վուրդներու, որ ապրած են հեռացող դարերու մէջ:

*
*
*

Զօրավար Zeppelin, որ 30 տարիէ ի վեր օդապարիկի վրայ
փորձեր կ'ընէր՝ շինած է (ինչպէս կը հաւաստէ Ռըվիւ տէ
Ռըվիւ) օգային նաւ մը, որ պիտի լուծէ մթնոլորտին մէջ
ճանապարհորդելու խնդիրը: Մօտ ժամանակներու մէջ,
նոր փորձեր, անգամ մ'եւս, պիտի հաստատեն այդ գիւտի
յաջողութիւնը. ու ընդհանուր աշխարհը շահագրգռող այդ
հարցը անձ յեղաշրջում առաջ պիտէ բերէ քսաներորդ դա-
րու մէջ:

Շարժման մէջ կը դրուին մասնաւոր կերպով շինուած
գործիներ, շարժական մեքենաներու միջոցով, այնպէս որ
օգային նաւի բոլոր կազմն ու դրութիւնն օդը կը սլանայ:
Մինչեւ հիմա եղած փորձերը վճռական են: Հաստատուած
է որ բաւականաչափ ոյժ մ'իջերելով, մարդ պիտի կարողա-
նայ ճամբորդել օդին մէջ ուղիւ չափովն ու տեւողութեամբ,
թռչունի մը նման:

Տեւողութիւնն եւ թռիչք կանոնաւորող շարժիչ գրու-
թիւնը (aéroplane) է միայն՝ որ ինչպէս գիտնականօրէն
նոյնպէս ալ փորձնականօրէն, ունի իր մէջ յառաջմղիչ եւ
կազդուրիչ ոյժ մը: Կէս դար առաջ Henson եւ 30 տարի առաջ
Springfellow շոգեշարժ մեքենաներով փորձեցին այս բանը՝
բայց չի յաջողեցան. սակայն անոնք գրին մասնաւոր մտա-
ծելու եղանակ մը, իրենց աշխատութիւններուն մէջ, որ
պիտի պատկէր օր մը իրենց նպատակակէտը յաջողութեան
գոմիւններով, ու այսպէսով իրենց մեծ արժանիքը չի նը-
սեմացաւ:

Կոմս Zeppelin նմանօրինակ ծրագիրով մը գրեթէ, աշխա-
տած ու յղացած է յառաջնիւն (propulseur) մը որ օժտուած
աղբեցիկ ոյժով մը կ'առաջնորդէ օդապարիկը, օդին մէջ,
կանոնաւոր արագութեամբ:

Յունիսի վերջերը հիմնեց, Պերլինի մէջ, գիտնական-
ներու ընկերութիւն մը: Գրամատէրներ մէկ միլիոն գրին եւ
օդային նաւը կառուցուեցաւ ալյումինիումով (alluminium):
Ատոր թերի կողմերը լրացնող ջանքերն ու կատարելագոր-
ծումը չուշացան: Օդային այդ նաւն ունի 153 մեթր եր-
կայնութիւն, 75 ոտք լայնութիւն եւ 23 մեթր ալ բար-
ձրութիւն. չորս յարկէ սունի մը նման, կը կրէ չորս շարք
պատուհաններ՝ լոյսի սուտքին համար: Ամբողջութիւնը,
բաժնուած 17 ֆոնթարթիւններու, եւ շրջապատուած է ցան-
ցով մը:

Իւրաքանչիւր բաժանում (compartiment) օդապարիկ
մը ունի, նաևն օդը բարձրացնելու համար. ու եթէ, պա-
տանմամբ, օդապարիկին մէկը փճանայ, միւսները կը գոր-
ծեն: Ատոնք, միտաքսապատ շրջանակով մը, պահպանուած
են մթնոլորտի փոփոխութիւններէ յառաջացած վտանգներու
եւ արեգակին աղբեցութեան դէմ: Նաևն ծայրերու այն-
պիսի ձեւ արուած է որ ոչ միայն կը դիւրացնէ անոր աըր-
ուելիք ուղղութիւնը, այլև կը նուազեցնէ հովին աղբեցու-
թիւնը: Օդապարիկները անթափանցելի (impermeable) են:
Իսրոճենով (hydrogène—ջրածին) կը ընուն գանոնք, որ
կը պատրաստուի, նոյն իսկ նաւին մէջ յատկապէս: 2000
գլաններ կան, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ 17
խորանարդ ոտք այդ կազէն. անպէս որ խորժէնի խոյա-
ցնող ոյժը 8 քոնի (մէկ tonneը հաւասար է 1000 քիլօի)
կը հասնի: Նաևն ամբողջ ծանրութիւնն ալ 4 թոնէ աւելի չէ:

Հնարիչին սկզբունքն է թէ ամն շարժումի մէջ
եղող մարմին կրնայ կառավարուիլ: Եթէ մինչև հիմա օդա-
պարիկը չեն կարողացած կառավարել, պատճառն այն էր

որ անոր ձեւը գիտական եւ մաստակարարուած ոյժը բաւական չէին. այս վերջինը հարկաւոր է մանաւանդ, ուղղիչ մեքենա ին վրայ ազդելով, անոր պէտք եղած ուղղութիւնը տալու համար:

Յաւաջընթաց եւ յետընթաց շարժումները կ'արտադրեն չորս հատ դարձող եւ մղումն արտադրող գործիներ որ, ունենալով իւրաքանչիւրն իր ղէկը՝ ղետեղուած են զոյգ ընդ զոյգ, օդային նաւին առջևն ու ետեւը:

Շարժիչ ոյժը արտադրող գործիները խիստ թեթեւ են. իւրաքանչիւրը կ'արտադրէ 12—15 ձիու ոյժ. ասոնք ալ կախուած են, նաւին ետեւն ու առջևը, 17 մեթր երկայնութիւն եւ 6 մեթր լայնութիւն ունեցող նաւակներու մէջ: Վերջապէս ամեն զրուշութիւններ ձեռք առնուած են օդային մեքենան սլացիկ ընկելու համար:

Օդային նաւը, իր ամբողջութեան մէջ, կը նմանի վանդակի մը, բոլորովին մետաքսապատ aluminiumով շինուած: Իր արագութիւնը մէկ ժամու մէջ, 22 մղոնի կը հասնի:

ՀԵՌԱԿՐԱԿԱՆ ՆՈՐ ԳԻՒՏ

Երկու հունգարացիներ Antal Pollak եւ Josef Virag, ելեքտրականութեան մէջ վարպետներ, յաջողած են շինել գործիք մը որ խիստ արագ կերպով, կարճ ժամանակի մէջ կը հաղորդէ մեծ թիւով բաշեր:

A. Pollak Պէրլինի՝ իսկ J. Virag Պուտա—ֆէշտի մէջ, գիտնականներու ներկայութեան իրենց գործիքին միջոցով փորձեր ըրին, իրարու հեռագիրներ ուղղելով, ու հաստատեցին թէ ելեքտրական 20 վոլթի (volt) ուժով մը, սոլուրական հեռագրական թելերու միջոցով, կրնան գիւրաւ մէկ ժամու մէջ 100 000 բառ փոխանցել. 25 վոլթի ուժով 150 000 եւ վերջապէս իրենց գործիքին արտադրած բոլոր արագութեամբ մինչեւ 200 000 բառ:

Նոյն օրն իսկ ամերիկեան թերթի մը (The world) 1200 բառ պարունակող հեռագիր մը կ'ուղարկեն: Հիմակուան դրութեամբ ամենէ կատարելագործուած հեռագրական գործիքին միջոցով, ճարտար հեռագրիչ մը հազիւ հազ մէկ ու կէս ժամու մէջ կրնար տալ այդ հեռագիրը. մինչ նոր գիւ-

աի հնարիչները ճիշտ մէկ վայրկեան դրին այդ արդիւնքը ձեռք բերելու համար :

Հեռագրութեան նշանագիրները, միեւնոյնն են ինչպէս Մօրսի դրութեան մէջ, կը ծակուին հեռագրական ընդ-ծովեայ պարաններու համար արդէն գործածուած մեքենայի մը միջոցով՝ գլանաձեւ փաթեթուած անծայր թուղթի շերտերու վրայ : Բազմաթիւ մարդիկ միեւնոյն ատեն կրնան աշխատիլ այս գործին համար ու եղած ծախքը՝ արդիւնքին բաշխատմամբ խիստ աննշան է :

Ահաւասիկ ամերիկեան վերեւ յիշուած լրագրին ուղղուած հեռագիրին հայերէն թարգմանութիւնը, զոր քաղած ենք Ռըլիւ տէ Ռըվիւէն :

« Արագ հեռագրութեան հնարիչները, Անթալ Փոլաք եւ Ժոզէֆ Վիրակ էնթէնիէօնները, երջանիկ են՝ փորձ մը զրկելով իրենց գիւտէն, ամերիկեան մեծ լրագիրին Ուօրլտի, որ միշտ առաջին հանդիսացած է՝ հռչակելով նոր գիւտերու արժէքը, եւ որ սակայ ջերմագին համակրութիւն ցոյց տուած է դէպի Հունգարիան : Կը խնդրենք Ուօրլտի անօրէնէն ու հրատարակիչներէն, որ կարեւոր տեղ մը կը գրաւեն բոլոր աշխարհի մամուլին մէջ, քննել մեր գիւտին արժէքը, յայտնել անոր վրայ իրենց կարծիքը եւ զայն ծանօթացնել իրենց հասարակութեան : Կը յուսանք որ արագ հեռագրութիւնը քիչ ժամանակի մէջ կարող պիտի լինի լրագրութեան մեծամեծ ծառայութիւններ մատուցանելու եւ աշխարհի մէջ յառաջդիմութեան ու զարգացումի վաղափարները տարածելուն օգնելու : Անգլիական ու ամերիկեան մամուլը միշտ շահագրգռուած է եւ բարի զգացումներով վերաբերուած՝ դէպի կարեւոր գիւտերը, ու այս պատճառով իսկ է որ մենք բարձր նշանակութիւն կուտանք իր կողմէ մեր ջաջին յայտնուած երախտագիտութեան » :

Մ Օ Ր Մ Ը Ն Ա Ի Ա Տ Բ Ը

ՎԻՊԱԿ

(Իրական կեսնֆե)

4.

Առաւօտը բոլորովին յառաջացած էր ու տունին միւս բոլոր անգամները իրենց գործին գացած էին: Ծաղիկ իր եղբոր մօտիկը նստած կը հսկէր խոհուն դէմքով մը: Կը մտաբերէր այն բոլոր զուարճալի վայրկեանները զորս անոր հետ անցուցած էր: Պրպտեց իր մտքին մէջ թէ ի՞նչ զբօսանքներ ըրած, երգեր երգած էին իմիասին, ու յանկարծ սկսաւ լալ երբ յիշեց թէ, օր մը, այնքան անդթօրէն մերժած էր իր եղբոր կապին մը, զոր ան կ'ուզէր ունենալ: Որքան ուրախ պիտի լինէր եւ երջանիկ, եթէ իրեն ուրիշ առիթներ ներկայանային իր պզտիկ եղբոր կամքը կատարելու եւ իր գործած այդ մեղքը քաւելու: Իր փափուկ սիրտն այնքան յուզուած էր, եղբայրական սիրոյ այրող զգացումներով, որ ինքն իր անձին դէմ առեւտուր թիւն կ'զգար, թէ՛ ինչո՞ւ մինչեւ այն ատեն չէր կարողացած զգալ այն մոլեգին սէրը, որով կը սիրէր իր հիւանդ եղբայրը:

Արեգակը արդէն բարձրացած էր ու սենեակին լուսամուտներէն իր ճառագայթները ներս թափանցած էին, երբ Ծաղիկ զգաց թէ իր մայրը կ'ուշանար. եւ ոտքի ելլելով յառաջացաւ դէպի սենեակին դուռը զոր բացաւ մեղմիկ մը ու ինչ . . . իւր մայրը հոն փոռած գտաւ:

7.

Տիկին Ագապիի—այս էր Ծաղիկի եւ Նշանիկի մօր անունը, — դրացի էր Ալմաս Մօրքուրը: Միջանասակ, դէր, լեցուն եւ բաւական տարիքոտ կին մը, որ արդէն կեանքի զառնութիւններու փորձը քանի մը անգամներ ունեցած էր: Իր ամուսինին վաղահաս մահը երբեմն զինքը մինակ թողած էր, բազմաթիւ զաւակներու հետ, որոնց ինչպէս կերակրելու նոյնպէս ալ մեծցնելու հոգն ինք ստանձնած էր: Ու իր կրած տառապանքն ու ունեցած վաստակը, զինքը երբէք չկասեցուցին: Տարիները կը շարունակէին հեռագրեակ իր զաւակներու մեծնալովը իրենց հետ կը ընդէին ուրախութեան նոր ժամեր. երբ երկինք չկամեցաւ որ այդ անվհատ կինը, իւր կեանքին մէջ ժպտի. անոր ազրանիկ զաւակը, քսանուհինք տարեկան, կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ մեռաւ ու նոր սեւ օր բացաւ իր խեղճ մօր: Բաղդի

մը գտիր նշանիկս փրկելու համար զոչեց խեղճ մայրը, ու ուժասպառ, չի յնալու համար Ալմաս Մօրքուրին կրթնեցաւ :

Ալմաս Մօրքուր անել վիճակի մը մէջ կը գտնուէր. պէտք էր խեղճ մայրը հանգստացնել. պէտք էր զայն քաջալերել եւ մխիթարել. դառն իրականութիւն մ'էր սակայն նշանիկին ծանր հիւանդ վիճակը : Դեռատի մանուկներու համաճարակ մը՝ ժամանակէ մը ի վեր բոլոր քաղաքը սարսափի մէջ թողած էր : Ամեն օր տասնէն մինչեւ քսան մանուկներ կը հնձուէին մահուան չարաշուք մանգաղով : Տեղացի ժողովուրդը հիւանդութիւնը կ'անուանէր պօղպ սօրնասի. որ ուրիշ բան չէր եթէ ոչ ճիճփեթի տարափոխիկ հիւանդութիւնը :

Խեղճ մայրը զոչ մը մո՛ւ առած Ս. Աստուածամօր տաճարը պիտի երթար. որովհետեւ այլեւս ան կ'ուզէր միայն ապակինիլ, ինչ որ իր ջերմ հաւատքն ալ էր, սուրբերուն ու անոնցմէ միայն յուսալ էր զաւակին փրկումին միակ ճարը. յո՛յս որ կը մեղմացնէ կեանքի հետ կապուած ու անկէ ծնունդ առած բոլոր իրական չարիքները :

Ալմաս Մօրքուր յորգորեց երկիւղած մայրը « որ քաջութիւնն ունենայ տոկալու կեանքի վիշտերուն. ու այն պատուհասը, որով Աստուած կը պատժէր ամբողջ մեղաւոր քաղաքը կտորելով անմեղ մանուկներն ու պատանիները, ընդհանուր լինելով, պէտք էր Տիկին Ագապիի յիշեցներ թէ Նախախնամութեան կողմէ զրկուած ամեն բան բարի է. ու անոնք պարտաւոր էին Յօր երանելիի անարտունջ համբերութիւնն ունենալ. շատ ողբալն ու տխրելն Աստուծոյ ակորժելի չըլլալէ զատ անոր դէմ մեղանչել էր » :

Այս խօսքերէն յետոյ Ալմաս Մօրքուր բաժնուեցաւ Տիկին Ագապիէն որ Ս. Աստուածամօր մատուռին ուղին բռնեց :

Տիկին Ագապի խորանին առջեւ ծնրագիր աղօթեց իր բոլոր հոգովն ու սրտովը. ու միշտ խնդրեց պաղատագին որ Աստուածածինը գթայ իբր մայր, դժբաղդ մօր մը վրայ : Այնքան թաղուած էր ան իր աղօթք — աղաչանքին մէջ որ ժամերու երկարելն իսկ չէր զգար, ու կարծես թէ չէր ուզեր անկից հեռանալ, առանց իր զաւակին փրկութեան խոստումն ստանալու :

Ու վերջապէս ոտքի ելաւ, շուրջը հոյեցաւ եւ իր աչքին հանդիպեցաւ՝ գրակալի մը վրայ, շարջնիքու մէջ դրուած արժաթապատ նարեկը, որ քաղաքին մէջ իբր բուժիչ մեծ անուն կը վայելէր : Խնդրեց փաճախայէն որ նարեկը

մէկ երեկոյ ալ իր զաւակին գլուխին վերեւը դրուէր, ու ստանալով՝ փոքր ինչ մխիթարուած՝ տուն փութաց :

Ե

Ալմաս Մօրքուր իր տունը չի վերադարձաւ անմիջապէս : Կ'ուզէր Տիկին Ագապիի օգնութեան հասնիլ . կ'ուզէր փրկել անոր զաւակը : Յիշեց յանկարծ թէ Տիկին Ագապի ուխտած էր մէկ օր առաջ « ոտքով եօթն անգամ Ս. Կիրակոսի ուխտավայրը երթալ եօթը սարի, եթէ իր զաւակը բժշկուէր » : Մտածեց պահ մը, ու գոհունակութեան ժպիտ մը փայլեցաւ իր շրթունքներու վրայ . « Պէտք է երթամ՝ սուրբ Կիրակոսի Մասունքը գտնեմ . հիմա քաղաք բերուած է եւ կը գանուի ինչ Խաչանի տունը » ըսաւ ու իր ճամբան փոխեց :

Խուլ Խաչանի գլխաւոր զբաղումն էր սուրբերու մասունքներուն հիւանդներու տուները տանելը, ու սրբավայրերու համար դրամ եւ մոմ հաւաքելը : Նուիրուած բոլորովին իր գործին՝ անիկա կ'ուզէր, կարծես, իր երջանկութիւնն ու հոգեկան գոհացումը հոն փնտռել, լինելով զըրկուած լսողութիւնէ : Նիհարկէկ եւ միջանասակ մարդ մը, որուն դէմքին վրայ կը կարգացուէր անմեղ պարզմտութիւն մը : Կլխարկին շուրջը փաթթած էր սեւ ետզղա մը, որ երկիւղած մարդոց սովորական զարդարանքը կը կազմէր : Հագած էր պարեգօտ (էնթարի) մը որ երկու կողմերէն բացուած ճեղքերէն ցոյց կուտար տակէն հագած քանթայօնիս սրունքները : Երկար վերարկու մը մինչեւ ծունկերը կ'իջնէր ու մէջքին շուրջը զգալի կ'ընէր տակէն կապած թաւ գօտիի մը գոյութիւնը :

Խուլ Խաչան հիւանդի մը տունէն, մասունքը ձեռքը, նոր տուն կը հասնէր երբ Ալմաս Մօրքուր ներս մտաւ : Բարձր ձայնով սկսաւ այս վերջինը խօսիլ ու խուլ Խաչան խոստացաւ երեկոյին Մասունքը Տիկին Ագապիի տունը տանիլ ու ամբողջ գիշերը հոն, Նշանիկի գլուխին վերեւ թողուլ զայն :

Ալմաս Մօրքուր իւր տունը վերադարձաւ, ու Տիկին Ագապիի խնացուց իր ըրած կարգադրութիւնը :

Զ

Սմբողջ օրը Տիկին Ագապի արիւն արցունք թափեց . Նշանիկին Տեւ եկող տիկիններէն եւ ոչ մին կրցաւ զայն հանդարտ վիճակի մը մէջ դնել : Նշանիկին անարը նստած

անոր ամենափոքր շարժումներն իսկ աչքէ չէր փախցներ : Իր զաւակին բան մը կերցնելու հոգը յաճախ պատճառ կը լինէր, որ վշտանար մայրը չմերժէր այցելու տիկիններու բերած տանձերէն ու խնձորներէն, նարինջներէն ու նուռերէն, մէջ մէկ քիչ մաքրելով նշանիկին շրթունքներուն մօտեցնելու, որ սակայն բոլորովին անկարող էր ուտելու ու նոյն իսկ կաթ խմելու :

Լաւ տանձ է, քիչ մը տուր նշանիկին կ'ըսէր տիկիններէն մին : — Ուրիշ մը « Հիւանդի ուտելիք մտախոշ խնձոր է » կ'աւելցնէր : — Նուոր մախուս հիւանդին կը յանձնարարեն հեփիլները՝ ջօնախիւ սո'ւր » կը յարէր երրորդ մը . այնպէս որ նշանիկի ուտելու անկարող վիճակին նանդէպ, այսքան թախանձանքներէն խեղճ մայրը լիբլին ծայր կը գգածուէր, մանաւանդ որ տանջուող մանուկը՝ շաքաթէ մը աւելի կար որ բերանը « պաիկ ժը ջուր » իսկ չէր դրած :

Բոլոր այցելուները հետզհետէ մեկնեցան, մութը կը պատէր ամեն կողմ, երբ Խուլ կնաչան Ս. Կիրակոսի Մատուսքը բերաւ : Տիկին Ագապի, Ծաղիկ եւ Ալմա Մօրքուր կարգաւ համբուրեցին զայն ու նշանիկին ալ գիւտարութեամբ համբուրել տուին :

Նշանիկի հիւանդութիւնը սակայն, աւելի բուժելու երեւոյթ ունէր քան թէ ծանրանալու : Տղուկները օգտակար կերպով ներգործած էին հիւանդին վրայ . շերմութիւնը տկարանալ սկսած էր . Ղրաձգութիւնները նուազած էին : Յաճախ ան իւր աչքերը բացած իր մայրը կը փնտռէր որ պատրաստ էր իր կամքը կատարելու :

Կէս գիշերն անցած էր . մայրը՝ երբ յոգնած կը մրափէր՝ զլուխը նշանիկին բարձին դրած, յանկարծ ոտտուճով մը արթնցաւ . իր զաւակը կը խօսէ՛ր . — « Մայրի՛կ, երբ ես մեռնիմ գերեզմանիս վրայ ծառ անկեցէ՛ք . անցած օր դասընկերս մեռաւ, ես ալ պիտի մեռնիմ . երբ հետը մէկտեղ գերեզմանոց գացինք ամառը, այնպէս ուխտեցինք որ երբ մեռնինք մեր վրայ ծաղիկ ցանեն » : — Նշանիկ կը զսուանցէր, ու պաղ քրտինք մը ամբողջ մարմինը պատած էր : Խեղճ մայրը նշանիկին խօսքերուն հակառակը պատասխանեց : — « Ս . Կիրակոս քեզի պիտի առողջացնէ զաւակս, Աստուած, էթէ քու մեղաւոր մօրդ ձայնին չլսեց . սուրբին միջնորդութիւնը պիտի ընդունի . եւ զու չողը պիտի առողջանաս » ըսաւ ու հախուրեց Ս . Կիրակոսի Մատուսքը : Ոտքի ելաւ ու եօթն անգամ նշանիկին անկողնին շուրջը զարձաւ . եօթն անգամ « նշանիկին սեւ օշուան Տատուք է՛նձ տուր ո՛վ Աստուած » աղերսանքը հոգս չի ըրաւ :

Նշանիկ իր մօր խօսքերուն եւ ոչ մէկն լսեց եւ ո՛չ մէկին պատասխանեց. սակայն իր զառանցանքին գլխաւոր պատճառն էր այն օր այցելող տիկիներու խօսակցութիւնը: — «Ի՛նչ, քուրուկ, գիտես, այս ցաւը ով որ բռնէ կը տանի, այս ջնճոխէն ես յոյս չունիմ. նայե՛ ինչպէս նիւհարցած է, կարծես ի հոգին պօղագին մէջ կը պլպլայ»: — «Այսօր արդէն, մինակ մեր փողոցէն, հինգ տղայ թաղեցին»: Այս եւ ասոր նմանօրինակ խօսքեր դարցած էին սենեակին մէջ, էւրօքանչիւր անգամ որ Տիկին Ագապի հիւր մը ընդունելու կամ ճամբելու համար դուրս կ'ելլէր. ուր որ տիկիները կարծած էին թէ հիւանդը, արդէն, իրենց յետու անկորոզութեան մէջ կը դաւնուէր:

Արշալոյսը կը ծանուցանէր ատուան դալուստը: Նշանիկ աչքերը բացած ու լուսամուտներու ապակիներու վրայ դոյալցած սառոյցի ծաղկոնման բիւրեղները կը դիտէր:

Յանկարծ տան դուռը զարկին. ամենքը քնաշար էին: Տիկին Ագապի ալ յոգնած կը նիրհէր: Դուռը վերստին զարնուեցաւ. Նշանիկ այս անգամ իր բոլոր ոյժը ժողլելով. «Մայրի՛կ, Մայրի՛կ, դուռը կը զարնեն» գոչեց. Մայրը արթնցաւ իւր գաւակը համբուրեց ու փութաց դուռը բանալ: Ալմաս Մօրքուրն էր որ հկած էր իմանալու Նշանիկի վիճակը, եկեղեցի երթալէ առաջ:

— Նշանիկ «լաւ եմ պատասխանեց»:

Մայրը ժպտեցաւ: Իր ուխտը նորոգեց. շերմոտանդ հաւատքով համբուրեց Ս. Նարեկն ու Ս. Մատենքը:

Իր մուրափին հասած էր. . . : Նշանիկ բժշկուած էր (*):

ԽՈԿ — ՊԵՏ

(*) Այս վիպակին նիւթը գաւառացի Տաճկահայերու կեանքէն առնուած է:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԹՈՒ Ա ԽՏՐ

Տղայոց մեջ. — Ենչառական գործարաններու միջոցով, մանուկները՝ իրենց ծաղիկ հասակէն, յաճախ կ'ստանան թոքախտի սերմեր ու զանոնք կը պահեն անվթար եւ յետամնաց վիճակի մը մէջ: Ուշադրութիւն դարձնել մանուկներու եւ պատանիներու վրայ, այս տեսակէտով, ծնողքներու եւ դաստիարակներու պլլաւոր զբաղումներէն մէկը պէտք է լինի: Մանաւանդ գործաւոր դասակարգին վերաբերող տղայոց նախատրամադիր վիճակը, այդ տարափոխիկ հիւանդութեան սերմերը ծծելու համար, անհերքելի կերպով ճշմարիտ է. որովհետեւ երբ, որ եւ է վարակիչ հիւանդութիւնէ ազատած ապաքինութեան շրջանը կը մտնեն՝ անոնք առողջապահական խիստ յոռի պայմաններու մէջ կը գտնուին. ապաքինութեան շրջան մը, ուր պէտք ունին ամեն խնամքի եւ հոգատարութեան:

Ամուսնութեան մեջ. — Ամուսնալիւսն մշտութիւնը կը նպաստէ թոքախտի վարակումին, հիւանդէն առողջ ամուսինն ու զաւակները: Կնոջ յղի եւ ծննդաբերութեան սկար վայրկեաններն ամենէ նպաստաւոր պայմաններն են թոքախտին ծծուելուն: Ամեն անոնք որ թոքախտը ժառանգականօրէն ունին պէտք չէ ամուսնանան. հակառակ պարագային ամուսնութիւնը՝ իսպառ արգելելու է անչափանաս տարիքի մը մէջ: Երբ ամուսնութենէ վերջ, ամուսնացողներէն մէկը թոքախտաւոր կը լինի, անհրաժեշտ է կարելի եղածէն չափ երկու ամուսիններու մէջ, ուղղակի յարաբերութիւնն ու շփումը նուազեցնել. միեւնոյն բանն ընելու է թոքախտաւորին զաւակներու, ծառաներու եւն. ինչու: Հակելու է զգուշութեամբ թոքախտաւորին թուքին, խուսին եւ բոլոր արտաթորումներուն, ինչպէս նաեւ անոր կերած կերակուրի ամաններուն, ճերմակեղէններուն եւ հագուստներուն վրայ, որ իմիասին չզրուին:

Նախագոռչական միջոցներ. — Թոքախտաւորին մահէն

յիտոյ հակահնչակու է բնակարանն ու անոր բոլոր առարկաները: Գործարաններու եւ տուներու մէջ, միշտ փոշին պէտք է մաքրել: Թոքախտ ունեցող գործաւորները միշտ հեռու աշխատելու են առողջներէն: Իսպառ արգիլելու է թոքախտաւորին գետինը թքնել: Երբէք խնամել չտալ ինքզինքը թոքախտաւոր բժիշկներէ: Չգնել միս այն մսագործներէն որոնց թոքախտ ունենալը ծանօթ է. որովհետեւ յաճախ, անոնք աղտոտած եւ վարակած կը լինին իրենց լորձունքով ու թուքով, այն միսերը զոր յաճախորդին կը ներառայցնեն:

Բժշկական փորձեր հաստատած են որ կովի եւ ոչխարի կաթը թոքախտի տարածումի գլխաւոր աղբւրներէն մէկն է. ուստի այդ կենդանիներու առողջական վիճակին վրայ կատարեալ վստահութիւն ունենալէ վերջ միայն անոնց կաթը գործածելու է:

Թոքախտի դարմանութիւնը. — Տակաւին որոշ բուժազարմանի ուղղութիւն մը չէ գտնուած. սակայն ինչպէս սննդառական նոյնպէս ալ ֆիզիքական շատ պայմաններ կան որ օգտակար ճանչցուած են: — Հանգիստ վիճակ մը, բնակութեան համար օդաւէտ եւ մաքուր վայրեր, ջրաբուժութիւն, լոյս, եւն. հիւանդութիւնը զգալապէս կը մեղմացնեն: Սովորականէն աւելի սննդարար կերակուրներ եւ մինչեւ իսկ ոգելից ըմպելիներու չափաւոր գործածութիւն թոքախտաւորին մասնաւորապէս յանձնարարելի պատուէրներ են: Չգետեղէններու մաքրութիւն ինչպէս նաեւ որոշ զեղերու գործածութիւն մը կ'ամբողջացնեն թոքախտի դարմանումին գլխաւոր պայմանները:

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Այրուածֆները բուժելու դիրին եղանակ. — Երբ մարմինին մէջ մասը կ'այրի, անմիջապէս ձիթաբլղով (huile d'olive) — գեյրին ետըր — պէտք է զայն պատել. կամ ուղղակի իւղը լրան լեցնելով կամ բամպակի կտորով կաթեցնելով: Յետոյ իւղին վրայ ալիւր ցանել, մինչեւ անոր

յազննալը, ու կապել այրուած անգամը եթէ ասոր պէտք կայ: Ճաւն ոչ միայն կը կարի, ու հիւանդը կը հոնգրտանայ, այլեւ մեծ հաւանակութեամբ վէրքը սպի չի ձգիր:

2. Անկ կոչիկներէ առաջ եկած վերքերը — Հետեւեալ կերպով պատրաստուած սպեղանին լաւագոյն արդիւնքներ տուած է:

Savon de potasse de commerce	52 parties
Eau	27 «
Vaseline	15 «
Oxyde de zinc	6 «
Essence de lavande	q. s.

3. Երկաթի շինուած անեկ առարկայ (գործի, հրազէնի եւն.) ժանգոտելէ պահպանելու միջոց. — Հալեցնել 1⁰) կր. ոչխարի ճարպ (graisse) ու յետոյ վրան մինչև թանձրանալը ձիթախող լեցնել, գրեթէ 5⁰) կր: Այս պատրաստութեամբ, երկաթեղէն առարկաներն իւզել լաւագոյն եղանակ մ'է:

4. Դարուան ֆերրուածֆոլ առաջ եկած վերքերու. — Առնելու է ժերանիօլի (ըթը) քանի մը տերեւներ ու գանոնք մաքուր լաթի մը մէջ տրորելէ վերջ, վէրքին վրայ դնելու է յաճախ մէկ տերեւը վէրքը կը բուժէ. որովհետև կը կպի զօրաւոր կերպով մորթին, մետրուն իրարու մօտեւալուան կ'օգնէ եւ, քիչ ժամանակի մէջ վէրքն ալ կ'սպիւրացնէ:

5. Մարմնամարզութեան փորձառու մէկը կը հաւատայ թէ, ետ ետ քալուածքը՝ ապահով եւ անվրիպելի միջոց մ'է ծագումով ջգային եղող գլխացաւը բուժելու: Տասը վայրկեանի՝ դանդաղութեամբ կատարուած մարզանք մը բաւական է այս արդիւնքին հասնելու համար:

Ամեն պարագայի մէջ, կարելի է, առանց վտանգի, փորձել այս խրատը:

« ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » Ի ՄԱՏԵՆՍԴԱՐԱՆԸ

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

Յովհաննէս Շահնազարեանէ՝

1. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆՈՎԵԱՆԻ հասարակական եւ գրական նախան գործունէութիւնը (1889 Մոսկուա, հրատ. ԲՃ.Ս. Շահնազարեանցի): 2. ԱՆՄԵՂ ՉՈՂԵՐ — կանաչք Գ. Չուրարի վէպիկներում — (1889 Մոսկուա, հրատ. ԲՃ.Ս. Շահնազարեանեանցի):

Բժիշկ Յ. Մշխանեանի՝
Contribution à l'étude de la maladie de Ménière—thèse
de doctorat (1899 Paris).

Արժ. Գիւս առագ ֆահանայ Աղանեանցի՝
ԼՈՒՄԱՅ—գրական հանդէս, Գ. տարի, գիրք Բ. (Թիֆ-
լիս, 1899 յուլիս):

Գ Ր Ա Ք Օ Ս Ա Կ Ա Ն

Խ. ԱՐՈՎԵԱՆ

Հետաքրքրութեամբ կարդացի Պ. Յովհաննէս Շահնա-
ղարեանի երկու քննադատական տետրակները.

1. Խաչատուր Աբովեանի Հասարակական եւ Գրականա-
կան Գործունէութիւնը:

2. Անկեղ գոներ (Կանայք Գ. Զուբարի վէպիկներում:
Քննադատութիւնը, ապահովարար, այն միակ միջոցն է,
որով կարելի էր լինի խարաղանել՝ ինչ որ վնասակար
երեւոյթ ունի եւ կարող է յոռի ազդեցութիւն թողուլ
մեր ընկերական կեանքին վրայ, եւ փոխադարձաբար՝ դժը-
րուատել ու ջատագովել ինչ որ լաւ է, օգտակար ու գեղե-
ցիկ: Մէկ խօսքով, Քննադատութիւնը փորձաքար մըն է,
որ կը ծառայէ իրերու բուն արժէքը գնահատելու:
Աւելորդ է յարել, բնականաբար, թէ խօսքս պնայտ, ուղ-
ղակիս եւ հեղուք քննադատութեան համար է, որովհետեւ, հա-
կառակ պարագային, ան բոլորովին կը կորսնցնէ արժէն իր
արժէքը, եւ փոխանակ օգտակար ծառայութիւններ մա-
տուցանելու մեղի, կրնայ պղտորել միտքերը եւ նոյնիսկ
որոշ չափով վնաս պատճառել որ եւ է հասարակական գործի:
Այն ատեն իրաւունք կ'ունենանք ստորագծել Թեօֆիլ
Կորիեի խօսքը. — «Les critiques ne peuvent faire autre chose
que conchier et gâter les ouvrages des autres. — Քննադատ-
ները (գէշ իմաստով անշուշտ) չեն կրնար ընել ուրիշ բան
բաց եթէ՝ ապականել ու աղարտել ուրիշներու գործերը:

Երբ այս բացազանչութիւնները կը լսենք, վերջացող դարուն ամենամեծ քննադատներէն մէկին բերնէն, լուրջ քննադատութիւնը աւելի ու աւելի զգալի կը դառնայ, մանաւանդ մեր մէջ :

Այո՛, մանաւանդ մեր մէջ, ուր քննադատական կոչուելու արժանի երկասիրութիւններ շատ հազուադէպ են :

Պ. Շահնազարեան գոլելի ընտրութիւն մ'ըրած է, նուիրուելով գրականութեան այդ ճիւղին, որ կարող է մեծ օգուտներ մատուցանել, եթէ երիտասարդ քննադատը ջանայ, աւելի լուրջ ուսումնասիրութիւններով, ընթարձակել իր տեսութեան հորիզոնը :

* * *

Իրապէս ով էր Խ. Աբովեան եւ ինչ արժէք կամ նշանակութիւն ունին անոր գործերը գրական եւ հասարակական տեսակէտով :

Իր կեանքը բաւականաչափ ծանօթ է ուստահայերու ուսումնասէր մասին. իսկ տաճկահայերը, դժբախտաբար, խիստ տարտամ գաղափար մ'ունին անոր վրայ, որովհետեւ այդ մեծ մարդն իրենց ճանչցնողներ չեն եղած :

Իսկ անոր գործունէութեան (գրական) մասին կարծիքները խիստ այլազան են, ու՛ երբեմն նոյն իսկ՝ հակասական : Գանի մը կարծիք մ'իայն .

« Խ. Աբովեան իր ամբողջ համբաւը պարտական է իր գլուխ գործոց դիւցազներգութեան, որուն մէջ նա կը հանդիսանայ սուղծող միաք մը. անոր սիրտը՝ բռնկած իր ցեղակիցները ծայրայեղօրէն սիրելու տենդով՝ կ'այրի, կը մրկի ինք իր մէջ, ու կրակ ու թոց կը տեղայ աֆէն այն բաներուն վրայ, որ տոճմային չեն : Անկէց դուրս, — « հասարակական գործունէութեան » տեսակէտով, — աւելորդ է նոյն իսկ իր անունն արտասանել, կ'ըսէր օր մը, հեղինակաւոր մի անձ :

Ուրիշներ պնդած են՝ թէ « Խ. Աբովեանի գրական երկերն իսկապէս շատ կը նսեմանան իրեն եռանդուն գործունէութեան հետ բաղդատելով » եւն. եւն. :

Ու Պ. Շահնազարեան կը նկատէ իր գրքոյկին մէջ՝ թէ « Խ. Աբովեանի երկերը գրականական տեսակէտից շատ թոյլ են . . . եւ չեն դիմանում կրիտիկայի: Օվսանայ, Ֆեոդորայ ո՛չ գեղարուեստական են, ոչ էլ ռէալական. դրանք իրենց մանրամասնութիւններով մեղանշում են իրական կեանքի դէմ: Պարսպ վախճի խաղալիքը փոքրիկ առականք են հասարակ մարդու համար պատմած մասշնլի լեզուով. որոնք այն առաւելութիւնն ունին, որ զուրկ չեն կրթողական նշանակութիւնից. Լուեցոց, Մօլլա Մարտաբէի, Հայակեր փեշի (եւայլն) մասին պատճաճները հասարակ մարդը կկարգայ հետաքրքրութեամբ: »

Աբովեանի գրականական գրուածքների պատկը . . . նոյնպէս կաղում է մեծ թերութիւններով. . . » եւայլն:

Ամէն լուրջ կարծիք. բնականաբար, ունի իրեն որոշ յենակէտ մը, կուտան մը՝ հիմնուած յարգելի սկզբունքներով լրայ, որոնց այլազանութիւնը միայն բաւական է որ, շատ անգամ, ամենահասարակ խնդրի մասին, բոլորովին տարբեր մտածենք, տարբեր զգանք իրարմէ եւ յամառինք ընդունիլ մեր դիմացիին առարկութիւնները, որքան ալ որ բանաւոր լինին անոնք:

Այսպէս թէ այնպէս՝ Խ. Աբովեան կը մնայ միշտ այն մեծ մարդը, ժողովրդական այն մեծ բանաստեղծն ու դիւցազներգուն, որուն յիշատակը սուրբ պէտք է լինի մեզ ամէնու համար եւ նուիրական: Անոր գաղափարները, գերազանցօրէն վեհ ու ազնիւ, թող մեր բնաբանը լինին ու միշտ առաջնորդեն մեզ, մեր մանուկներն անոնցմով սնուցանելու համար: Մեր պաշտած կու՛ռքը թող լինի Աբովեան:

Անուբանալի է որ անոր երկերը պակասութիւններ ունին, — մեծ գործերը մեծ թերութիւններ կ'ունենան — բայց այդ պատճառ մը չէ որ, « եթէ մենք կամեմուտ ենք ներշնչել մեր ժողովուրդին, ընթերցող հասարակութեանը այն առաջադէմ իգէանէրն, որոնք Աբովեանի երկերում են արծարծած, » չտարածենք « Ս. Շահազիզեանի, Ռ. Պատկանեանի, Պերճ Պոչեանի, Բաֆիու, եւայլն, գրուածքները » հետ նոյնիսկ Աբովեանի երկերը:

Վաղաքակիրթ ազգերը սովորութիւն ունին ժողովրդականացնել այն հեղինակութիւնները, որոնք դիւրամատչելի չեն անվարձացած դասակարգի հասկացողութեան, եւ զսասկանացնել այն գործերը, որոնց ամբողջութիւնը նոյնութեամբ անմարսելի է դպրոցականներուն կամ ինքնադարգացումով պարապողներուն : Այսպէս, գերմանացի եւ յետոյ անգլիացի մանկավարժ-բարոյախօսները, մասձեցին համառօտել նոյն իսկ Աստուածաշունչը, զոր հիները՝ աւանդական պահպանամոլութեամբ մը՝ Աստուծոյ պատգամին պէս անձեռնմխելի կը համարէին, եւ ժողովուրդին ու դպրոցականներուն մէջ սարածելին զայն՝ անոր բացարձակապէս դասակարգ (classique) դոյն մը տալէ չերջ :

Աբովեանի երկերն ունին թերութիւններ. — չափազանցութիւններ, ոճի խրթնարանութիւններ, նամանաւանդ աւելորդ կրկնութիւններ, բուն նիւթէն անտեղի շեղումներ, եւ այլն. — որոնք նոյնպէս արգարանան թերեւս, եթէ նկատի ունենանք ա՛յն ժամանակը, միջավայրն ու հանդամանքները :

Բայց, առանց հեռուները երթալու, եթէ կ'ուզենք որ Աբովեանի «առաջագէժ իգէաները» ցանկալի կերպով արձագանգ գտնեն մեր ժողովուրդին մէջ, հետեւինք եւրօպացիներու օրէնսակին, — մեղմննք չափազանցութիւնները, կոկենք ոճը (անոր համե ու հոսք պահելով անշուշտ. ու նոյն իսկ՝ հարկը պահաջած ժամանակ՝ վերածենք գրական լեզուին), ջնջենք կրկնութիւնները, կարգի բերենք շեղումները, — եւ մեր ժողովուրդին տանք իսկապէս դասական հրատարակութիւն մը, որ ոչ միայն լինի ամէն մի կարգալ գիտցողի սեղանին զարդը, այլ եւ անոր մշտական ընթերցանութեան առարկան :

Պէտք է ըմբռնել վերջապէս որ, ինչպէս անմոռանալի Մերենցի աւետարան Երկունիքը, նոյնպէս ալ Խ. Աբովեանի Վերջը արժանի է այդ աւետակ գնահատութեան :

ՅԻՇԷՍՍ.

Յ. Գ. Չպիտի խօսիմ Պ. Շահնազարեանի Աննեղ Ձոհերու վրայ, որո լհետեւ ծանօթ չլինելով Գ. Չուբարի գործերուն՝ չեմ կարող ի հարկէ ո՛ր եւ է կարծիք յայտնել այդ մասին :

Յ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն Լ Ե Ձ Ո Ւ

ՆՈՑՆԱՀՆՁԻՆ ԲԱՌԵՐ

B

Bébé ազ մանկիկ :
 bey ազ կառավարիչ, պէյ :
 bai ած մթադոյն կարմիր :
 baie իզ ծովածոց :
 baie իզ տեսակարար անուն
 փոքրիկ կուտեր պարու-
 նակող կակուղ պտուղնե-
 ներու (խաղող) :
 bée ած իզ մէկ կողը հան-
 ուած տակառ :
 Banc ազ նստարան :
 ban ազ աքսոր :
 ban ազ հարսանիքի աղղ :
 Bas ազ գուլղայ (մինչեւ
 ծունդը ծածկող) :
 bas ած ցած :
 bât ազ իշու համետ :
 bats բ je— կը ծեծեմ . battre
 բայէն :
 bah ! à ողա՛հ . վա՛շ :
 là-bas մք հոն վարը :
 Balai ազ աւել :
 balais գ կարմիր յակիւնի
 տեսակ :
 ballet ազ պարերգ :
 balaye բ je— կ'աւլեմ . balä-
 yer բայէն :
 Bon ած բարի :
 bond je— կ'ոտանում bondir
 բայէն :
 bon ազ վճարաթուղթ :
 bonbon ազ անուշեղէն :

C

Camp ազ բանակետ :
 Cham Գամ :
 Kant Գանթ (փելլիսոփայ մը)
 quand հրը :
 quant à գալով :
 qu'en que եւ en :
 cancan ազ զրարանութիւն :
 Cette ած այս :
 cet ած այս (արական եւ ձայ-
 նաւոր բառի առջեւ) :
 ces ած յգ յոգնակի ձեւ ce
 cela ի :
 c'est այս է :
 sais բ je— , tu— , il sais գի-
 տեմ, եւն . savoir բայէն :
 s'est se est :
 sept ազ եօթ :
 Seth Սէթ :
 cep ազ բուն (խաղողի) ;
 Ci—près մզ մօտը :
 cyprès ազ նոճիի տեսակ մը
 si près ած այնքան մօտ :
 sie իզ սողոց :
 six près վեց մարդեր :
 Coin ազ անկիւն :
 coing ազ սերկեւիլ :
 quoi rester — կարկամիլ,
 պապանձիլ :
 coi, te ած ազ հանդարտ ,
 շարունակելի

Le Gérant : CHARLES BEAULIEUX

Imprimerie de Lutèce, L. GIRARD, 102, Rue Monge. Paris

ՔԱԶՄԱՎԷՊ

Հանդիսարան

Ամեն տեղ

Տարեկան 10ֆր.

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

— Հայ Որբերուն նպաստելու համար Բազմալիկ պիտի հրատարակէ պատկերազարդ, մաքուր թղթի վրայ, 40 էջով պրակ մը: Բաժանորդագին 2, 50ֆր. Բաժանորդներու անունները պիտի տպուին Բազմալիկի կողքին վրայ: Բաժանորդ լինելու համար

Դիմել՝ Rédaction de la revue «PAZMAVEB» St' Lazare VENISE (Italie)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ Ուսումնասիրք

Ամեն տեղ, Տարեկան 10 ֆր.

Դիմել՝ Réd. de la revue «HANTESSE»

VII/2 Mechitaristengasse 4.

(Autriche) VIENNE

ԼՈՒՄԱՅ

— Կրական Հանդես —

(Տարեկան 2 Դիրք)

Բաժանորդագին 3 սուրյիլ Դիմել՝

Archiprêtre Gut Aghamiantz

(Russie) TIFLIS

ՄՇԱԿ

Կրակն. եւ Կաղաքական

Լրագիր

Տարեկան 30 ֆրանք. — Դիմել՝

Rédac. du journal «Mschak» TIFLIS (Russie)

Թիիլվայն ԼՐԱԿԻՐ

Տարեկան 15 ֆր. Դիմել՝

Ալբաս Բարթեակի (Կ. Պոլիս)

Գաղասքէրխան Պահէճէզարու

ՔԱՆՆՍԻՐ

ՀԱՆԴԷՍ

Հնայն. Պատմ. Լեզուաբն. Բնական

Կը հրատարակուի տարին 4 գիրք

Բաժանորդինն է տարեկան 20 ֆր.

M' Basmadjian

112, Bd. Rochechouart, 112— Paris

ԱՐՇԱԼՈՅՍ

Լրագիր

Ազգային, Կրական, Կաղաքական

Օտար երկիրներ 20 ֆր.

Réd. du journal «Archalouice»

[Habbanieh] LE CAIRE

(EGYPTE)

ՎՐԻՊԱԿ (քիւ 1)

Էջ 7. տող 34, սարդկային — մարդկային: Էջ 15. տող 32 անկախութեան — անկախութեան: Էջ 19. տող 35, կառարետլ — կատարեալ: Էջ 24. տող 19, ամաստուններ — անասուններ: միւսնոյն էջ. տող 20 փոփոխութեամբ — փոփոխութեամբ: Էջ 27. տող 25, նուազելովը — նուազելովը: Էջ 41. տող 29, զմասունները — զմասունները: Էջ 50 տող 9 (վարէն), ուստերեկէ — ուստերեկէ: Էջ 63. տող 17: 18, 19, 20, abaisse (ամենքն ալ մէկ ի ով) abaisse եւն: Նոյն տող 23. քաղաքի — քաղաքի: Նոյն տող 32. ընկալաբիր — ընկալագիր:

Մեր բաժանորդներէն ոմանց գոհացում տալու համար, կը փութանք ծանուցանել որ նիւթերու ցանկը, ինչպէս նաեւ վրիպակներունը, տարիին վերջը ամբողջութեամբ պիտի տրուին:

Նիւ—Եօրք. — Կ. Մարտիան: Թերթը Պ. Մ. Խարբերդ, ստացած է: Նիքոսիա. — Օր. Կիւլեգեան: Բաժանագիրը կրնաք զրկել money-orderով Զակաղիկ. — Կեչիչեան: Արկեցինք. ուրիշ անդամ գիմիլ Պ. Գործկոթին Աղէքսանդրիա. — Սեպն. Ինչ ձեր բուն հասցէն. նոր ճամբայ պիտի հանէ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ:
Իւրաքանչիւր թիւը պիտի ունենայ, առնուազն, 48 էջ:
Բաժնեդիրը ԿԱՆՆԻԿ է.

	Տարեկան	Վեցամսեայ
Ֆրանսա	10 ֆր.	5 ֆր.
Օտար երկիրներ.	12 »	6 »
Թուրքիա	(ողջ) 50 ղրշ.	25 ղրշ.
Ռուսիա	5 ռուպլի	2 ռ. 50 կ.
Ամերիկա	2 տոլար	1տ. 20 ս.

Մէկ թիւը, ՖՐԱՆՍԱ, 1 ՖՐԱՆՔ

Նամակ եւ Գրուածքներն ետ չեն տրուիր:
Կը տպագրուին, չափաւոր գիներով, ազդեր եւ յայտա-
բարութիւններ:

Խմբագրութեան՝ նամակ, յօգուած, դրամ, եւայլն, ղրկել՝

RÉDACTION du « HAMALSARAN »
3, Place Monge, 3
PARIS

Խմբագրութիւնը պատասխանատու չէ, իրեն ուղղուած
նամակներու համար որ ապահովագրուած չեն:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

- Ախալցխա . — Ն. Գէյ. Համբարձումեանց
- Աւերիկա (Troy) . — Ա. Գ. Թորոսեան
- Դալիբեժ . — Տօք. Կ. Փաշաեան
- Երզնկա . — Կ. Նարնջեան
- Թոֆաթ . — Յ. Սիւլադեան
- Վաշիկերն . — Ա. Յովսէփեան
- Վարոնեժ . — Մ. Թիւթէլեան

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴՍՍ առնել փափաքողները կրնան դի-
մել մեր միջոցով մեր թերթի Արտօնատէրին (Gérant):

ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կը կատարուին օտար երկիրներէ եղած ամեն տեսակ
յանձնարարութիւններ, փութով եւ խնամքով: Դիմել «Հա-
մալսարան»ի հասցեով՝ Պ. Գ. Պարտիզպանեան

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԵՐՈՒ ԶՈՒԼԱՐԱՆ

Կը ձուլուին նաեւ տաճկական, եւրոպական եւ եբրայեցիներէն
տառեր: Դիմել՝ Mr Agop Dzerounian, SOFIA [Bulgarie]